Ազգ

Հոկտեմբեր 5. 1991
Շաբաթ
եռօրեայ թերթ,
Ա տարի, թիւ 67
գինը՝ 30 կ.

հասցեն՝ Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռախօս՝ 581841
Ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243267 SULA SU

Արցախում շարունակվում են սպանությունները

Երեկ, ժամը 16.00-ից օմոնականները մեծ ուժերով հարձակվել են հայկական Ղարաչինար գյուղի վրա: Երկարատև հրետանային ռմբակոծությունից հետո, մոտ ժամը 17.00-ին զոհվել են գյուղի բնակիչներ Յուրի Եսայանը - 58 տարեկան, Գերիկ Զախարյանը - 53 տարեկան, Սլավիկ Խաչատրյանը - 35 տարեկան եւ Ռոզա Խաչատրյանը - 43 տարեկան: Վիրավորվել են 8 հոգի, որոնցից մեկի վիճակը ծանր է: Վիրավորվել է նաեւ ռուս լրագրող, *«Նովոյե Վրեմյա»* ամսագրի աշխատակից Նիկոլայ Կաղինկինը: Ազերիները երեք անգամ փորձ են արել մտնել գյուղ, սակայն ինքնապաշտպանական ջոկատների կողմից ետ են շրջվել: Գյուղը ռմբակոծվել է «ադազան» հրթիռներով եւ ծանր հրետանիով, որոնք տեղադրված էին ադրբեջանական Շաֆեզ եւ Ջեյվա գյուղերի միջեւ:

Այս գիշեր ազերիների կողմից նորից դայթեցվել է Ստեփանակերտի ջրատարը, որը հայկական կողմը վերանորոգել էր ընդամենը երկու օր առաջ: ■

ՀՌԱԿ-ի ներկայացուցիչների հանդիպումը Լ. Տեր-Պետրոսյանի հետ

Հինգշաբթի, հոկտեմբերի 3-ին, Հայաստանի Հանրապետության ընտրական կենտրոնական հանձնաժողովի կողմից իբրեւ Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության կողմից առաջադրված նախագահական թեկնածու պաշտոնապես գրանցման առիթով, ՀՌԱԿ-ը ներկայացնող մի պատվիրակություն, բաղկացած Վ. Ուզունյանից, Ռ. Միրզախանյանից, Ս. Սահակյանից, Պ. Քացախյանից, Վ. Պետրոսյանից, Վ. Խաչատրյանից եւ Հ. Ավետիքյանից, այցելեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին:

Շուրջ մեկ ժամ տեւած տեսակցության ընթացքում, շնորհակալություն հայտնելով Ռամկավար ազատական կուսակցությանը մայր հայրենիքում թե սփյուռքում իր նկատմամբ տածած մեծ վստահության համար, Լ. Տեր-Պետրոսյանը հայտնեց, թե ինքը նախագահական ընտրաղայքար չի տանելու, այլ զոհանալու է իրեն հասանելիք մնկժամյա հեռուստատեսային ելույթով, նախընտրելով այդ ժամանակը հատկացնել իր պետական գործերին, հատկապես այս ծանր օրերին, երբ դժվարին ձմեռ է սպասվում մեր երկրին: Լ. Տեր-Պետրոսյանը ՀՌԱԿ-ի ներկայացուցիչների հետ արծարծեց նաեւ արտաքին աշխարհի հետ տնտեսական կապերի պահպանման գծով փոխադարձակա ուղիների հարցը: Հանդիպման ընթացքում Գերագույն խորհրդի նախագահը բարձր գնահատեց Հայաստանի տնտեսության վերականգնման, ինչպես նաեւ Հայաստանի նոր պետականության հզորացման ուղղությամբ ՌԱԿ-ի ջանքերը, հայրենիքում թե սփյուռքում ՌԱԿ-ի դրսեւորած առողջ վարքագիծը: ■

Փոխհրաձգություն Թբիլիսիում Գամսախուրդիայի կողմնակիցների եւ հակառակորդների միջեւ

Հոկտեմբերի 4-ին, առավոտյան ժամը 10-ի մոտ, զինված մարդկանց մի խումբ հարձակվել է Թբիլիսիի միլիցիայի բաժիններից մեկի վրա, որտեղ տեղակայված էին ազգային գվարդիայի Զվիադ Գամսախուրդիային հավատարիմ ստորաբաժանումները: Հարձակման հետեւանքով վիրավորվել են միլիցիայի 2 աշխատակից:

Հարձակվողները գտնվում էին մերձակա շենքերի կտուրներին, որտեղից նշանառու կրակ էին վարում: Մոսկվայի ժամանակով ժամը 12-ին փոխհրաձգությունը դեռ շարունակվում էր:

Ավելի վաղ ականատեսները հաղորդել են Թբիլիսյան լճի շրջանում տեղի ունեցող փոխհրաձգության մասին:

Մինչդեռ պաշտոնական աղբյուրները, որոնց դիմել էր «ԻՏ»-ի թղթակիցը, հայտարարեցին, որ այդպիսի լուրեր չունեն: Փոխհրաձգության մասին դեռ ոչինչ հայտնի չէ հանրապետության ՆԳՆ-ին:

Հոկտեմբերի 3-ի ուշ երեկոյան ազգային գվարդիականները Թ. Կիտովանիի հրամանատարությամբ լրել են հեռուստակայանի մոտ գտնվող իրենց դիրքերը: Քաղաքի պարեսի մամուլի կենտրոնի տվյալներով, նրանք վերատեղաբաշխվել են Թբիլիսյան լճի շրջակայքում:

Հեռանալուց առաջ Թ. Կիտովանին, ելույթ ունենալով հեռուստակայանի մոտ տեղի ունեցող ընդդիմության հանրահավաքին, հայտարարեց, որ նրան աջակցող զինված մարդկանցը հեռանում են Թբիլիսիից, որպեսզի *«եղբայրների միջեւ արյունահեղություն չլինի»*: Միեւնույն ժամանակ նա նախազգուշացրել է, որ եթե իշխանությունները սկսեն ուժով ցրել ընդդիմության կողմնակիցներին, արդա ազգային գվարդիան կվերադառնա նրանց պաշտպանելու համար:

Քաղաքից հեռացել են նաեւ ընդդիմությանն աջակցող Մերաբ Կոստավայի միության ստորաբաժանումները:

Մինչդեռ հոկտեմբերի 4-ին, Թբիլիսիում հեռուստակայանի մոտ շարունակվում էին ընդդիմադիր կուսակցությունների կողմից կազմակերպված բողոքի ցույցերը:

Բազմամարդ էր նաեւ կառավարության տան մոտ, ուր հավաքվել էին Վրաստանի բոլոր շրջաններից ժամանած Զ. Գամսախուրդիայի կողմնակիցները:

Երեկոյան կողմ իրավիճակը Թբիլիսիում ծայրաստիճան սրվել է: Ընդդիմության հանրահավաքի ժամանակ հայտարարվել է, որ խորհրդարանական գվարդիայի վրա են հարձակվել նախագահ Գամսախուրդիայի կողմնակիցները, սպանվել են 3 գվարդիականներ: Այդ հայտարարությունից հետո ընդդիմության կողմնակիցները շարժվել են դեպի խորհրդարան, սակայն Գամսախուրդիայի զինված համախոհները կանգնեցրել են նրանց:

«ԻՏ»-ի թղթակիցը հաղորդում է, որ իրավիճակը Թբիլիսիում շիկացել է: Հակադրվող կողմերի մոտ է դուրս եկել Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահ Ակակի Ասատիանին: Հենց փողոցում են սկսվել բանակցությունները ընդդիմության ղեկավարների հետ:

Մինչդեռ պաշտոնական իշխանությունները մերժել են ավելի վաղ ստացած լուրն այն մասին, թե ընդդիմադիր գվարդիականները հարձակվել էին միլիցիայի բաժանմունքի վրա: ■



Մասաչուսեթսի նահանգապետը հոկտեմբերի 12-ը հռչակում է ՌԱԿ-ի օր

Բոստոն, 3 հոկտեմբեր 1991,
Մեր սեփական թղթակից Համլետ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Առաջիկա շաբաթ, հոկտեմբեր 12-ին, Բոստոնում առանձին շուքով նշվելու է Ռամկավար ազատական կուսակցության հիմնադրման 70-ամյակը: Հանդիսությունը կայանալու է նշանավոր Բեյմոնտ Հայ Սքոլի հանդիսասրահում նախագահությամբ Ամերիկայի Արեւելյան թեմի հայոց առաջնորդ գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսամյանի:

Բացի ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության անդամներից եւ բազմաթիվ հյուրերից, հանդիսությանը ներկա է լինելու նաեւ Հայաստանի Հանրապետության Ամերիկայի լիազոր ներկայացուցիչ Ալեքսանդր Արզումանյանը: Օրվա գլխավոր բանախոսն է լինելու ՀԲ. Միության նախկին երկարամյա ընդհանուր տնօրեն Միսակ Հայկենցը: *«ՌԱԿ-ի ծառայությունները մեր ազգին»* թեմայով իր պատրաստած տեսաժապավենն է ցուցադրելու հրաչակավոր դերասան եւ բեմադրիչ Պերճ Ֆազլյանը:

Այնուհետեւ հանդես կգան հանրածանոթ երգիչներ Մանուելը, Ջոնի Ռուբյանը եւ Նյու Ջերզիի Օհանյան նվագախումբը:

Ռամկավար ազատական կուսակցության հորելյանի կապակցությամբ Մասաչուսեթս նահանգի նահանգապետ Ուիլյամ Ուելդը 1991 թ. հոկտեմբերի 12-ը հատուկ հրովարտակով հռչակել է ՌԱԿ-ի օր:

Հրովարտակի մեջ մասնավորապես նշվում է ՌԱԿ-ի դերը Մասաչուսեթսի նահանգի, ինչպես նաեւ Ամերիկայի, Կանադայի եւ ողջ սփյուռքի կյանքում: ■

Միջին Ասիայի դեմոկրատական համաժողովի ղեկավարը մտահոգություն է հայտնում

«Կրգզգզստան» դեմոկրատական շարժման եւ Միջին Ասիայի դեմոկրատական համաժողովի ղեկավարներից մեկը հայտարարեց, որ հիմա Ուզբեկստանում սկսվում է բաց քաղաքական պայքար հանրապետության նախագահ Իսլամ Քարիմովի բռնատիրության դեմ:

«ԻՏ»-ին տված հարցազրույցում Տողտուբեկ Տուրգունալիեւն ասաց, որ ներկա պահին Ուզբեկստանում ստեղծված իրավիճակը շատ ավելի վտանգավոր է, քան Տաջիկստանում եւ Թուրքմենիայում: Ավելի շատ տագնապ է հարուցում այն, որ Ուզբեկստանն արդեն կազմավորում է զինյալ ուժեր, իսկ Իսլամ Քարիմովը հռչակում է, որ անհրաժեշտ է անհապաղ վերացնել սահմանները Միջին Ասիայի հանրապետությունների միջեւ: Ինչպես հաղորդեց Տ. Տուրգունալիեւը, *«Քարիմովն ակնհայտորեն ցովինիստական ձգտումներ ունի՝ վերածել Ուզբեկստանը մի պետության, որն առանձնապես կալ կտա հարեւան միջինասիական հանրապետությունները»*: ■

Ադրբեջանը մինչեւ հոկտեմբերի 15-ը չի ստորագրի տնտեսական պայմանագիրը

Ադրբեջանի նախարարների կաբինետում կայացավ հանրապետական նախարարությունների եւ կազմակերպությունների ղեկավարների խորհրդակցություն, որ ճնշարկվեցին Ալմա-Աթայի 13 ինքնիշխան հանրապետությունների ղեկավարների հանդիպման արդյունքները: Վարչապետ Հասանովը նշել է, որ Ադրբեջանը չի համաձայնել ստորագրել տնտեսական պայմանագիրը մինչեւ հոկտեմբերի 15-ը այն պատճառով, որ դրանք հարցերում Ադրբեջանն ունի իր դիրքորոշումը, այդ թվում տնտեսական ընկերակցության մասին պայմանագրի պայմանների, ինչպես նաեւ ռազմաարդյունաբերական համալիրի եւ արտաքին պարտքերի հարցերում:

Նա նշեց, որ Ադրբեջանը մասնակցել է ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծմանն ու ամրապնդմանը, հետեւաբար հանրապետությունը պետք է ունենա իր ներդրած բաժնի իրավունքը զինված ուժերի այդ համալիրում:

Ադրբեջանի Գերագույն Խորհրդի նախագահ Էլմիրա Կահարովան որոշում ընդունեց հրավիրել հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը հոկտեմբերի 8-ին:

Մինչդեռ, ինչպես հաղորդեց Ադրբեջանի նախագահի մամլո ծառայությունը, հոկտեմբերի 3-ին տեղի ունեցավ Այազ Մութալիբովի հանդիպումը Ժողովրդական ճակատի ղեկավարների հետ: Նրանք ճնշարկեցին ստեղծված իրավիճակում հանրապետության առջեւ կանգնած առաջնահերթ խնդիրները: Հանդիպման ժամանակ ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ հանրապետության խորհրդարանի աշխատանքն ավելի գործունյա դարձնելու վերաբերյալ: ■

4-րդ բանակը զինել է Ադրբեջանին: Արմենպրես գործակալությունը, հիմք ընդունելով հավաստի աղբյուրները, հաղորդել է, որ Ադրբեջանի տարածքում տեղակայված 4-րդ բանակի զինտեխնիկայից 1989 թվականին ադրբեջանական կողմին անվերադարձ տրվել են 100-ից ավելի զրահամեքենաներ, մոտ 1000 միավոր զենք, ինչպես նաեւ զինամթերք, փամփուշտներ, պայթուցիկ նյութեր: ■

Տարաձայնություններ Ալմա-Աթայում

Հոկտեմբերի 1-ին Ալմա-Աթայում հանրապետական ղեկավարների հանդիպման ընթացքում անհամաձայնություններ են ծագել միայն հանրապետությունների բանկերի միջազգային բանկերի հետ կապերի հաստատման հնարավորությունների եւ ընդհանուր բյուջեում տարեւային աղետների ժամանակ օգնության հիմնադրամ ունենալու վերաբերյալ հարցերում:

Այդ մասին հաղորդեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Ղազախստանից վերադառնալուց հետո: ■

ԽՍՀՄ բյուջեի դեֆիցիտը աճում է

Այս մասին հայտարարեց ԽՍՀՄ Ֆինանսների նախարար Վլադիմիր Ռաեւսկին *«ԻՏ»*-ի թղթակցին: Այն ընդգրկում է 200 միլիարդ դեֆիցիտ միութենական եւ 100 միլիարդ ռուբլի հանրապետական բյուջեներից: Ամեն ամիս միութենական բյուջեի դեֆիցիտը աճում է 21-22 միլիարդ ռուբլով: ■

Ընտրական հանձնաժողովի որոշումը բողոքարկվել է

Երեկ, Հայաստանի Գերագույն դատարանը լսեց Զ. Բալայանի նախաձեռնող խմբի կող մից կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումը բողոքարկելու մասին հարցը: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 24-ին կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստը գրանցել է ընտրությունների մասին օրենքի երկրորդ հոդվածի խախտումներ, ըստ որի ներկայացված բլանկները ճանաչվել են անվավեր: Երեկ մինչեւ ուշ երեկո նիստը շարունակվում էր: Թե ինչ կորոշի դատարանը, կհաղորդենք հաջորդ համարում: ■

digitised by A.R.A.R.@

Ադլերի հայ մշակութային կենտրոնը

Սոչին բաժանվում է չորս շրջանների՝ Կենտրոն, Լազարեւսկ, Խոսսա եւ Ադլերի շրջան: Այս բոլոր շրջաններում էլ հայ կյանքն ընթանում է իր հունով: 1989 թ. նոյեմբերի 19-ին Սոչիում ստեղծվեց *«Սեւան»* մշակութային կենտրոնը, որովհետեւ Սեւան քաղաքն է իր վրա վերցրել այս կենտրոնի հովանավորությունը: Կենտրոնի ղեկավարն է Հովհաննես Կիրակոսի Չեղոյանը, որի գրասենյակը գտնվում է Լոռիում:

Հայ մշակութային կենտրոնն ունի իր բաժանմունքները Սոչիի 4 շրջաններում: Այժմ ավելի մանրամասն նկարագրենք Ադլերի հայ մշակութային կենտրոնի գործունեությունը: Ադլերի շրջանը հայերով ամենախիտ բնակեցված շրջանն է: Այստեղ կան մի քանի հայկական գյուղեր՝ Չերեմշյա, Պրիմերնայա, Մոլդովկա, որտեղ հայերը բացարձակ մեծամասնություն են կազմում: Ադլերի հայ մշակութային կենտրոնի ղեկավարն է Ֆրունզե Վարդանի Ղազարյանը: Նա եւ կենտրոնի մյուս անդամները, իրոք, հայրենանվեր գործ են կատարում իրենց հայրենակիցների համար:

Այս կենտրոնի նպատակն է հավաքել բոլոր հայերին իր շուրջը, միշտ արթուն պահել հայ ոգին, բացել հայկական դպրոցներ, որտեղից սերունդը ամենուր պահպանի իր ազգային նկարագիրը:

Այստեղ՝ Ադլերի եւ Վեսյոլայա կոչվող գյուղի միջնակետում է գտնվում Սուրբ Սարգիս հայկական գործող եկեղեցին, որն ինքը խոսուն վկայություն է գոյատեւվող հայ կյանքի մասին: Եւ շուտով նախատեսվում է նաեւ հենց Ադլերում դնել հայկական եկեղեցու հիմնաքարը, որի արարողությանը խոստացել է մասնակցել ինքը՝ Ամենայն Հայոց Կարողիկոս Վազգեն Ա-ն:

Քանի որ հայ բնակչության մեծամասնությունը համշենահայեր են եւ խոսում են համշենի բարբառով, նրանք սեպտեմբերին կհրաժարակեն իրենց անդրանիկ բերքը՝ «Ձայն Համշենի»-ն:

Ինչպե՞ս են տրամադրված իրենք՝ հայ բնակիչները կենտրոնի հանդեպ: Ինչպես խոստովանեց կենտրոնի ղեկավարներից մեկը, *«նեղն ընկնելիս ավելի ակտիվ են դառնում եւ հաճախակի են հիշում կենտրոնի գոյության մասին: Ապրիլին, երբ կազակները ոտի էին կանգնել եւ հայերին «ուղարկում էին» իրենց հայրենիքը, այդ ժամանակ նրանք բոլորը դիմեցին կենտրոնին, պահանջում էին ավելի ակտիվ գործել, կոչ էին անում միավորել եւ միասնական պայքար մղել նրանց դեմ: Սակայն, երբ վտանգն անցավ, նրանք նորից հանգստացած անցան իրենց գործին եւ հազվադեպ են հիշում կենտրոնի գոյության մասին: Չնայած այս ամենին, կենտրոնը գործում է, միշտ է, ինչ-որ տեղ դանդաղ, ինչ-որ տեղ թերանալով, սակայն նրա շունչն զգացվում է ամենուր»:*

Ադլերի շրջանում, մինչ հայ մշակութային կենտրոնի ստեղծվելը կար 2 հայկական դպրոց՝ աշակերտների նվազագույն քանակով: 1988-89 թթ. ազգային զարթոնքից հետո այժմ Ադլերում գործում է չորս հայկական դպրոց: Եւ ինչպես վկայեց քիվ 66 հայկական դպրոցի ուսմասվար Հովհաննես Սունգուրյանը իրենց դպրոցն այժմ ունի 150 աշակերտ եւ ուրախալին այն է, որ աշակերտների թվաքանակի աճ է նկատվում: Եթե առաջ հայն իր զավակին տանում էր ռուսական դպրոց, պատճառաբանելով, որ միեւնույնն է, նա հայկական դպրոցի մակարդակով ոչ մի տեղ չի կարող ուսումը շարունակել, որ հայոց լեզուն նույնիսկ իր տեղում պետք չի գալիս իրենց, այժմ նա մտածում է այլ կերպ: Եւ այժմ մեծ ձգտում է նկատվում հայկական դպրոցների հանդեպ: Դպրոցներն աղահովված են ուսուցիչներով, սակայն դասագրքերի կարիք կա:

Երկրաշարժից հետո Ադլերի շրջան էին բերել 1000-ից ավելի հայ երեխաների, որոնց երկու տարի ուսուցանում էին այստեղի հայկական դպրոցներում: Նրանց հետ եկել էին նաեւ ուսուցիչներ, որոնցից մի քանիսը մնացին աշխատելու տեղի հայկական դպրոցներում:

Թիվ 66 դպրոցի բակում կա համշենահայերի ջանքերով 1990 թ. դեկտեմբերի 15-ին կանգնեցված է մի գեղեցիկ խաչքար, որի վրա կարդում ենք. *«Հայ անմեղ զոհերի անմար հիշատակին»:* Այն նվիրված է երկրաշարժի զոհերին: Սակայն խաչքարի մոտ տուրք են մատուցում եւ 1915 թ. ապրիլի 24-ի Մեծ Եղեռնի, եւ փետրվարի 28-ի ու դեկտեմբերի 7-ի անմեղ զոհերի հիշատակին: Արարողության վերջում ելույթ ունեցավ Կիրովականի երգի-պարի համույթը:

Աշակերտներն իրենք մեծ օգնություն են ցույց տվել խաչքարի պատրաստման աշխատանքներին: Նրանք իրենց ուսուցիչների հետ բարեգործական համերգներով հանդես են եկել Արխագիայի տարբեր շրջաններում եւ հավաքել մոտ 7 հազ. ռուբլի գումար եւ ներդրել խաչքարի պատրաստման աշխատանքներին: Մեծ օգնություն են ցույց տվել նաեւ աշակերտների ծնողները, որոնք ակտիվ կերպով մասնակցում են յուրաքանչյուր միջոցառմանը: Այս տարի դպրոցում բացվում է գրադարան:

Գրքերի մեծ մասը ուղարկվել է Հայաստանից: Դիմում ենք բոլորին. ցանկության դեպքում Ադլերի քիվ 66 դպրոցին ուղարկել հայերեն գրքեր նորաստեղծ գրադարանը հարստացնելու համար: Դպրոց են այցելել նաեւ հայ գրողներից շատերը եւ իրենց խորհուրդներով օգնել դպրոցի աշխատանքներին: Այսպիսով, կարող Հայաստանի հետ գնալով ակտիվանում է: Հայ մշակութային կենտրոնը համագործակցում է նաեւ ադիգեյների համայնքի, վրացական *«Իվերիա»*, հունական *«Էլլադա»* եւ այլ համայնքների մշակութային կենտրոնների հետ:

Սակայն այս ամենը չի նշանակում, թե համայնքում ամեն ինչ հարթ է ընթանում: Նրանք էլ ունեն իրենց պրոբլեմները ու չլուծված հարցերը: Առաջին հերթին զգացվում է դասագրքի խիստ պակաս: Ահա սեպտեմբերն է, սակայն Հայաստանից դեռեւս չեն ստացվել գրքերը, իսկ 4-րդ դասարանի համար չկա ոչ մի դասագիրք: Օտար լեզուն դպրոցում անգլերենն է, սակայն չըգիտես ինչու լուսավորության նախարարությունը նրանց ուղարկել է Ֆրանսերեն ձեռնարկ: Դպրոցի հայ շրջանավարտներին տրվում է Ռուսաստանի ազգային դպրոցի կրթության վկայական: Մի՞թե հնարավոր չէ այդ վկայականները ուղարկել Հայաստանից, որպեսզի շրջանավարտը ստանալով հասունության վկայականը՝ իրեն զոյված զգա, որ հենց Հայաստանից է ուղարկված այն: Ուսուցիչները կարիք ունեն նոր ծրագրերի, դիդակտիկ նյութերի, ուսումնական Ֆիլմերի, ձայնագրությունների:

Ադլերի հայ մշակութային կենտրոնն ունի նաեւ իր աղագա ծրագրերը: Հետագա կարողն էլ ավելի ընդլայնելու համար պետք է կառուցվի հյուրանոցի շենք Հայաստանից եկած գործիչներին, խմբերին, անհատներին տեղավորելու համար: Պետք է ունենան դահլիճ՝ տարբեր խորհրդակցությունների, սեմինարների, ինչպես նաեւ հասարակական գործունեության համար: Մտադրվել են ունենալ հայկական խոհանոց՝ ազգային կերակրատեսակներով: Ստեղծել բանգարան, ուր պարզ արտահայտվի հայ ժողովրդի պատմության անցած բոլոր շրջանները՝ սկսած քարե դարից մինչեւ մեր օրերը: Այսպես, հաջողություն ցանկանանք Ադլերի հայ մշակութային կենտրոնին իրենց սկսած մեծ, ազգանվեր գործում: Եւ յուրաքանչյուրս ուժերի ներածին չափով, թեկուզ սեկ հայերեն գրքեր ուղարկելով, կարողանանք օգտակար լինել այս եւ նման մյուս կենտրոններին:

Մեղա ՊՍԼՍՏՅԱՆ
ԺԳ թանգարան
ավագ գիտաշխատող

Գինու կոմբինատը գոհ է իրենից, իսկ մե՞նք

Խաղողի ամենասակավ բերքատու տարիներին անգամ մեր խանութներում չէր պակասում գինու տեսակներին: Սակայն վերջին 2-3 տարիներին գնալով վաճառասեղաններից անհետացան մեծ պահանջարկ ունեցող գինիները, չնայած գործում էին թե՛ խորհրդային, թե՛ կոլեկտիվ տնտեսությունները, որոնք կանոնավորապես կատարում էին իրենց վրա դրված մթերման պարտավորությունները: Գինու կոմբինատը այդ տարիներին իր արտադրանքի սակավությունը պատճառաբանում էր ջերի պակասով: Ասեմ, որ կոմբինատը հիմնականում աշխատում է հեռադարձ ջերով, իսկ մեր Արզնու աղակու գործարանը կոմբինատին տարայով կարողանում է աղահովել միայն 5 տոկոսի չափով: Եւ չնայած դրան, կրկնում եմ, մեր խանութներում երբեք չէր զգացվում գինու նմանօրինակ դեֆիցիտ:

Հողը տվեց գյուղացուն, մենք՝ բոլորս ողջունեցինք կառավարության որոշումը, ակնկալելով բերքի առատություն եւ գների նորմալացում: Սակայն ոչ մեկիս մտքով չանցավ, թե ի՞նչ է լինելու գինու եւ կոնյակի «Արարատ» արտադրական միավորման եւ միաժամանակ պահածոների գործարանի վիճակը: Արդյոք գյուղացին շուկան բողած իր բերքը, թեկուզ երկուսեք շահավետ գներով, կհանձնի՞ մթերող գործարաններին: Չէ՞ որ հողը տալով նրանց, գյուղացու վրա պետության նկատմամբ ոչ մի պարտավորություն չդրվեց: Այդ հարցի խոսուն պատասխանն է «Արարատ» արտադրական միավորման կողմից մեզ տրամադրված ցուցանիշը:

Այս տարվա սեպտեմբերի 25-ի դրությամբ, անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ խաղող պակաս է մթերվել 1700 տոննայով, չնայած խաղողի ընդունման գները, նայած բարարայնության, տատանվում են 1ռ. 50 կոպեկից 2ռ. 50 կոպեկի սահմանում: Ուզեցի իմանալ, թե նման պակասն ինչպես է անդրադառնում արտադրության վրա:

Եղա Երեւանի երբենի հզոր գինու կոմբինատի ըստ-ալցման արտադրամասում, որը, բանվորների ասելով, հազվագյուտ է այդ օրվա պես ռիթմիկ աշխատում: Խոսափողի մոտ հրավիրեցի կոմբինատի տնօրենի տնտեսական հարցերի գծով տեղակալ, գլխավոր հաշվապահ Ռուբեն Մարգարյանին եւ խնդրեցի ներկայացնել կոմբինատի ներկայիս վիճակը:

– Մենք հանդիսանում ենք երկրորդային գինու գործարան, այսինքն՝ հումը, գինու նյութերը ստանում ենք առաջնային գինու գործարանից, այսինքն՝ այն գործարաններից, որոնք խաղողի հումը մթերում են: Քանի որ տարուց մեկ տարի առաջ մեկ կիլոգրամի մթերվող գինը 50 կոպեկ արժեր, այժմ այդ գինը բարձրացրել ու հասցրել են 1ռ. 50 կոպեկից 2 ռուբլու, դրա հետ կապված բարձրացել է մթերվող հումի արժեքը, այսինքն՝ մեկ դեկալիտրի համար եթե առաջ միջինը վճարում էինք 9ռ. 40 կոպ., այժմ այդ գինը հասավ 60-90 ռուբլու: Իհարկե, դա անդրադարձավ գինու ինքնարժեքի վրա: Դրա հետ կապված մենք ունենք գինու տեսակներ, որոնք արդեն պայմանագրային գներով ենք բաց թողնում ըստ պատվիրատուների: Մեր ֆինանսների նախարարության կողմից նոր գներ մշակվեցին, հաստատվեցին եւ ուղարկվեցին մեզ, դրանք բաց թողնման գներ են կազմված գների այս փոփոխման հետ: Եւ այսպիսով, եթե առաջ գինենյութերի մեր մնացորդները 9-10 ռուբլու սահմաններում էին, այսօրվա վիճակով կրկնապատկվել, եռապատկվել, նույնիսկ կան գինիներ, որոնց գները 10 անգամ բարձրացել են, եւ միլիոնների են հասել մեր մնացորդները:

– Եւ չնայած գների կտրուկ բարձրացմանը, խանութներում բոլորովին օղի չըկա, գինու տեսականին է վերացել: Այդ մասին ի՞նչ կասեք:

– Մենք մինչեւ այս տարվա կեսերը օղի չէինք արտահանում, մնում էր մեր հանրապետության սահմաններում եւ բավարարում էր պահանջարկը: Սակայն այսօրվա տնտեսական սուղ պայմաններից ելնելով, վիճակը ճշտելու համար մեր հանրապետության ղեկավարությունը գնաց նրան, որ օղի էլ արտահանենք դուրս Ռուսաստան, սննդամթերք բերելու նպատակով: Դրա համար այս տարի 300 000 դեկալիտր հանվեց մեր սպառողների ֆոնդից եւ տրամադրվեց այդ նպատակին:

Դրա համար հիմա խանութներում օղու պակաս է զգացվում, բայց գինու մասին չէի ասի, որ գինի չկա: Որեւէ խանութ, որ մտնեք, գոնե մի տեսակ գինի կգտնեք: Իսկ գինին միշտ էլ առավել է հանրապետությունից դուրս, անգամ սրանից մեկ տարի առաջ արտահանում էինք արտասահման: Եւ քանի որ արտասահման առավում էր գնման գներով, իսկ հանրապետության եւ Միության տարբեր շրջաններ ուղարկվում է վաճառքի գներով, այսինքն տարբերությունը, շրջանառության հարկը մնում է հանրապետությանը, այդ պատճառով երեւի բույլ չտվեցին, որ արտասահման առավի:

Երբ զրուցում էի կոմբինատի տնտեսագիտական բաժնի վարիչ Հայկուհի Հովհաննիսյանի հետ, պարզվեց, որ չնայած բոլոր ստեղծված դժվարություններին, այս տարի, համեմատած անցյալ տարվա նույն ժամանակահատվածի հետ, ուշ անգամ մեծացել են նրանց օգուտները, արտադրությունն աճել է 20 տոկոսով: Տեսնելով զարմացած հայացքս, տիկին Հովհաննիսյանն ասաց, որ դա կատարվել է շրջանառության հարկի դրույքների պակասեցման հաշվին: Օրինակ, օղու մանրածախ գինը չի բարձրացվել, բայց բարձրացվել է շահութաբերությունը:

Տեսնո՞ւմ եք, չնայած «Արարատ» արտադրական միավորումը 1700 տոննայով պակաս է խաղող մթերել, Երեւանի գինու կոմբինատը գոհ է իր ցուցանիշներից, իսկ մենք դժգոհ ենք նրա մատակարարումից:

Սա պարադոքս չէ՞:

Լ. ԴԱՒՈՅԱՆ

Քողարկվելը միջոց չէ

Ինչպես հայտնեցին բնության պահպանության պետական կոմիտեից, «Նախրիս» գիտաարտադրական միավորումում սեպտեմբեր ամսին տեղի է ունեցել հոսակորուստ, սակայն թունավոր արտանետումների քանակը չի գերազանցել ընդունված նորման: Միեւնույն ժամանակ վրդովմունք հայտնեցին, որ միավորման ղեկավարությունից վերջերս նամակ է ստացվել, որտեղ առաջարկվում է պայմանագիր կնքել՝ տարբեր փորձաքննությունների նպատակով համապատասխան ներկայացուցչություն ուղարկելուց տասն օր առաջ իրենց հետ համաձայնության գալու համար:

Տեղի ունեցած հոսակորստի պատճառների, ինչպես նաեւ ընդհանրապես «Նախրիս»-ի տեխնիկական վիճակի մասին տեղեկանալու նպատակով այցելեցինք ձեռնարկություն: Սակայն հենց մուտքի մոտ թույլ չտվեցին գործարանի տարածք մտնել, երբ հանդիպած առաջին իսկ պատասխանատու հայտնի դարձավ այցի նպատակը:

Պատասխանատուն, անշուշտ, կոնսպիրացիայից ելնելով, պետք է որ գերադասեր անհայտ մնալ: Թեպետ անկեղծ ասած, ուրիշ ով կարող է այդպես անձնուրաց պատասխանել իր եւ միավորման շահերը, եթե ոչ անվտանգության տեխնիկայի բաժնի վարիչ Ցոլակ Խաչատրյանը:

Գ. ՄԱՐՏՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Արաբական Միացյալ Էմիրությունների հայ գաղութը

Արաբական Միացյալ Էմիրությունները (ԱՄԷ) ստեղծվել է 1971-ին: Մի քանի տարի անց Լիբանանում ծագեց քաղաքացիական պատերազմը:

1979-ին Իրանում տեղի ունեցավ կրոնական հեղաշրջում, որին հետեւեց տասնամյա զինված հակամարտությունը Իրաքի հետ: Բազմաթիվ հայեր արտագաղթեցին այդ երկրներից, հիմնականում դեպի Ամերիկա, Ավստրալիա: Այլոք բնակություն հաստատեցին Արաբական Միացյալ Էմիրություններում: Գոյացավ մի նոր հայկական գաղթօջախ: ԱՄԷ-ի հայ համայնքը փոքրաթիվ է, երիտասարդ, կազմակերպված: Մեկն է այն գաղութներից, որ կազմավորվել է ոչ վաղ անցյալում: Այսօր գաղութն ապրում է բովանդակալից ազգային կյանքով:

Օգտվելով հիշյալ համայնքը ներկայացնող պատվիրակության՝ Հայաստանում գտնվելու հանգամանքից, խնդրեցինք Շարժա-Դուբայի ազգային վարչության անդամ Նշան Բասմաջյանին պատմել գաղութի կազմավորման, գոյություն ունեցող կառուցվածքների, կրթական հաստատությունների եւ մի քանի հարակից հարցերի մասին:

-Հայերը Արաբական Միացյալ Էմիրություններում հաստատվել են սկսած 1940-ական թվականներից: Ճնշող մեծամասնությունը եկել է 1970-ից հետո, մանավանդ Լիբանանյան ճգնաժամի եւ իրան-իրաքյան պատերազմի տարիներին: Այժմ ԱՄԷ-ում բնակվում են նաեւ սիրիահայ երիտասարդներ, որոնք 5000 դոլլար վճարելով իրենց երկրի կառավարությանը, 5 տարի ժամկետով մեկնում են արտասահման եւ այդպիսով զերծ մնում զինվորական ծառայությունից: 1978-ին, երբ ստեղծվեց Պարսից ծոցի Կիլիկիո կաթողիկոսական փոխանորդությունը, Քուվեյթ ժամանած կաթողիկոսարանի ներկայացուցիչները այցելեցին նաեւ Էմիրություններ: Նրանց հետ ընտրակվեց ազգային վարչություն կամ երկու վարչություններ ստեղծելու հարցը. մեկը Շարժա եւ Դուբայ քաղաքներում միացյալ, մյուսը՝ Աբու-Դաբիում: Այս քաղաքների ներկայացուցիչները գումարեցին մի համատեղ խորհրդակցություն. պարզվեց, որ մոտ 1000 հայ է ապրում այդ երկու Էմիրություններում: Նրանց ազգային կյանքը պետք էր ինչ-որ կերպ կազմակերպել: Այդ նպատակով էլ արագորեն ստեղծվեցին 7 հոգուց բաղկացած երկու ազգային վարչություններ: 1979-ին կազմակերպվեց առաջին պարահանդեսը: Մասնակցում էին մոտ 450 հրավիրյալներ: Ցնծություն էր, հուզմունք, հաս հայեր նոր էին տեսնում միմյանց, թեեւ նախկինում ծանոթ էին եղել: Ամենքը ուրախ էին որեւէ հին բարեկամ գտնելու կամ նոր ընկերություն հաստատելու համար: Պարահանդեսից անմիջապես հետո մատուցվեց պատարագ: Ազգային կյանքն ահա այսպես սկսվեց:

Մի քանի այլ ընկերային ձեռնարկումներից հետո 1980-ին ծնվեց Շարժայում ազգային միօրյա վարժարան ստեղծելու գաղափարը: Մարտի 21-ին ժողով գումարվեց, եւ որոշեցին դպրոցը բացել: Այն ժամանակ կար 21 աշակերտ: Կամաց-կամաց վարժարանը կերպարանք ձեւ ստացավ, դասավանդողները, որ ուսուցիչ չէին եւ կամավոր հանձն էին առել այդ պարտականությունը, փորձառություն ձեռք բերեցին: Դասարաններն էլ ավելացան, աշակերտների քանակը մեծացավ, եղավ 30, 40, իսկ այս տարի ունենք 95 աշակերտ:

- Այն, ինչ դուք պատմում եք, տպավորիչ է, ոգեւորող: Սակայն ինձ այսպիսի հարց է հետաքրքրում: Ի՞նչն էր հայերին գրավում ԱՄԷ-ում: Նոր կազմավորված երկիր էր, բույլ տնտեսությամբ, հետամընաց...

- Հայերը մտածում էին կգնան այդ երկիրը, կաղրեն մի հինգ տարի, դրամ կաշխատեն, կարողություն կստեղծեն, հետո կրվերադառնան Լիբանան, Պարսկաստան, կամ կմնկնեն Ամերիկա:

ԱՄԷ-ն այն ժամանակ ցանկացած մասնագետի կարիք ուներ: Մի երկիր էր ավազով ծածկված, ջինություն չկար: Սակայն ունեին նավթ: Իսկ նավթի գները գիտեք, թե 1973-ից ի վեր որքան բարձրացան: Դրա արտահանումը եւ վաճառքը մեծ եկամուտներ բերեց: Հասել էր պահը, երբ երկիրը պիտի զարգանար: Մարդու կարիք ունեին, աշխատուժի, փորձառության: Եւ որովհետեւ շրջանի երկրներում, մանավանդ Լիբանանում, կային պահանջվող կադրեր, սկսեցին նրանց հրավիրել:

- Միացյալ Էմիրություններ մեկնողները մտադիր չէին այդտեղ մշտապես բնակվել: Այդ դեպքում ի՞նչ հանգամանքների բերադրանքով եւ չվերադարձան: Պարզ է, նախ ֆինանսական վիճակը բարելավելու հնարավորությունը դեր խաղաց...

- Այդ մեկ, հետո շատերը Լիբանան վերադառնալ չկարողացան երկրում քաղաքացիական պատերազմի շարունակվելու պատճառով, իսկ Ամերիկա կամ Եվրոպա գնալու համար անհրաժեշտ միջոցներ չունեին: Բացի այդ, Միացյալ Էմիրությունները ըսկսեց տնտեսապես առաջադիմել: Կյանքի պայմանները վատ չէին: Այլ երկրներում ունեցած ազատություններն ամբողջովին չէին սահմանափակվում:

- ԱՄԷ-ում միապետական կարգեր են: Սակայն դուք ասում եք, որ քաղաքացիները որոշակի ազատություն են վայելում: Ազգային փոքրամասնությունները, օրինակ հայերը, իրավունք ունե՞ն որեւէ միություն ստեղծել:



- Ոչ, միություն կազմել գործնականում չի արտոնվում: Օրինակ, մենք 80-ական թվականների սկզբներին դիմեցինք կառավարությանը, որպեսզի գաղութը պաշտոնապես ճանաչվի, կամ թույլատրվի մի մշակութային կազմակերպություն ստեղծել: Մեզ ակնարկեցին, որ ժամանակը չէ: Ինչու՞: Որովհետեւ նույն այդ ընթացքում փակվում էին մշակութային միությունները, որ արաբական էին եւ որոնք հավանաբար նաեւ քաղաքական գործունեություն էին ծավալում:

Մինչեւ այժմ ոչինչ չի փոխվել, բանի որ բազմիցս անուղղակի կերպով դիմել ենք: Թույլ են տալիս գործել, բայց խորհուրդ չեն տալիս պաշտոնական բնույթ հաղորդել այդ ամենին:

- Եթե դյուրին չէ մշակութային միության գոյությունը, հասկանալի է, քաղաքական կամ տնտեսական, ընկերային որեւէ միավորում կազմելն անհնար է: Իսկ կրոնական, եկեղեցու հետ կապված խնդիրներն ինչպե՞ս են լուծվում:

- Ի տարբերություն, ասենք, Սաուդյան Արաբիայի, ուր քրիստոնեական եկեղեցի չկա, Միացյալ Էմիրություններում այն թույլատրվում է: Մենք փորձում ենք, եւ կարծում եմ, եթե այս վերջին իրադարձությունները կապված Քուվեյթի հետ, չլինեին, կհաջողենք եկեղեցի կամ առնվազն հոգեւորականության մի պաշտոնական ներկայացուցիչ ունենալ գաղութում, որը կրոնական կյանքը կկազմակերպեր: Տավոմ, այս վերջին իրադարձությունները խոչընդոտեցին: Ներկայումս այդ խնդրի ուղղությամբ սպիտակ անգործության մեջ ենք:

Իսկ պատարագները, կրոնական մյուս արարողությունները կատարվում են այրոց, անշուշտ քրիստոնյա, եկեղեցում: Քուվեյթից ժամանում է Պարսից ծոցի կաթողիկոսական փոխանորդության ներկայացուցիչը:

- Այսպիսով, ԱՄԷ-ում հայերը գրեթե միայն վարժարան ունեն: Դուք Շարժայի մասին պատմեցիք, իսկ Աբու-Դաբիում դպրոց կա՞:

- Աբու-Դաբիում երկու դպրոց կա: Մեկը գտնվում է ազգային վարչության անմիջական հովանավորության ներքո, մյուսը Վ. Ինգիլիզյանի ջանքերով եւ նյութական զոհողությամբ ստեղծվեց:

- Պարոն Բասմաջյան, իսկ ազգային վարչությունների գործունեությունը (նրանցից մեկն, ասացիք, դպրոցի խնամակալությունն է ստանձնել) ուրիշ ի՞նչ ոլորտներ է ներառնում:

- Ազգային վարչություններին դիմում են թե նյութական, թե այլ հարցերով: Որեւէ մեկը խնդիր ունենալիս առավելապես վարչության աջակցությանը:

Գործունեության երկրորդ ասպարեզը մշակութային է՝ դպրոցին է հովանավորում, կազմակերպում է միջոցառումներ, պատարագներ:

- Հայրենիքի հետ կապերի մասին ի՞նչ կասեք:

- Դրանք գոհացուցիչ մակարդակի վրա են: Գոհ ենք: Կաշխատենք ավելի զարգացնել արդեն ձեռք բերածը:

Պատրաստեց Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

«Միասնությունը կթելադրվի մեր անկախությամբ»

Անկախության հանրաքվեի առիթով Հայաստան ժամանած արտասահմանցի լրագրողների թվում էր Լատվիայի Գերագույն խորհրդի պատգամավորներ, հանրապետության ամենազանգվածային թերթերից մեկի՝ *«Դիենա»*-ի հատուկ թղթակից Այներս Դիմանտսը:

- Հարգելի Այներս, դուք արդեն զգացել եք անկախությանը հասնելու բերկրանքը: Այժմ Հայաստանն էլ հռչակվեց անկախ հանրապետություն: Եթե համեմատենք երկու պետությունների անկախության գործընթացը, ի՞նչը հատկապես կառանձնացնեիք:

- Իմ պատկերացմամբ, Հայաստանն իր վերջին որոշումներին հասավ դարաբաղյան խնդրի համար տարվող պայքարի միջոցով, եւ սկզբում անկախության հարցը այդքան սուր ձեւով չէր դրվում: Լատվիայում անկախության հասնելու շարժումն սկսվեց իմքնիշխանության գաղափարից: Տարբեր քաղաքական ուժեր դա ըմբռնում էին այլ կերպ: Անգամ ժողովրդական ճակատի առաջին ծրագրում դա նախատեսվում էր որպես խորհրդային հանրապետությունների կոնֆեդերացիա, թեեւ Ազգային անկախություն շարժման համար հենց սկզբից դրված էր լրիվ անկախության հարցը: Որոշ ժամանակ անց ժողովրդական ճակատն էլ անցավ անկախության գաղափարին՝ բռնելով դեմոկրատական պաղլամենտական ուղին:

Այժմ, գործող պառլամենտը անցումային է, եւ նախապատրաստվում են նոր ընտրությունները, ինչը կհաստատի վերջնական պետականության վերականգնումը:

Իսկ թե ինչ ընդհանուր բան կա, իմ կարծիքով, փոքր երկրի անկախությունը յուրաքանչյուր քաղաքացուց պահանջում է մեծ կամք, քանզի յուրաքանչյուր անհատի ընտրությունից էլ կախված է անկախությունը: Անկախության սկզբունքը, իհարկե, չպետք է վեր դասել մյուս դեմոկրատական սկզբունքներից, բանի որ մեկը մտնում է մյուսի մեջ: Սակայն, ոչ միայն մեզ մոտ, այլեւ Հայաստանում կա այդ վտանգը:

- Իսկ ինչպե՞ս է լուծվելու քաղաքացիության հարցը:

- Դա բարդ խնդիր է եւ կապված է նախկին հանրապետության հետ:

Այժմ Լատվիայի քաղաքացիների երկու կատեգորիա կա: Նրանք, ովքեր ապրել են 20-30-ական թվականներին, եւ ովքեր եկել են հետո: Այժմ, պետք է ապահովի նրանց քաղաքացիությունը, ովքեր ունեն այդ իրավունքը: Նշեմ, որ շատ ոչ լատիշներ են քվեարկել անկախության օգտին, եւ դա նույնպես պետք է հաշվի առնել:

Դրանք հիմնականում 1940-ից հետո եկածներն են եւ կազմում են Լատվիայի բնակչության 30 տոկոսը: Ովքեր 1940-ից առաջ եղել են, նրանք եւ իրենց ժառանգները, դրանց մեջ կան նաեւ ոչ լատիշներ, իմքնաբերաբար դառնում են Լատվիայի քաղաքացի: Իսկ ովքեր չեն ուզում կորցնել ԽՍՀՄ քաղաքացիությունը, նրանց համար դա պահպանվում է: Այժմ այդ գործընթացը սկսվում է:

Կա նաեւ զորյական տարբերակ, այսինքն 1990 թ. մայիսի 4-ին, երբ ընդունվեց Անկախության մասին հռչակագիրը եւ կամ Անկախության մասին սահմանադրական օրենքի ընդունման պահին՝ 1991 թ. օգոստոսի 21-ին, ովքեր եղել են Լատվիայի քաղաքացի, նրանք կարող են ընդունել քաղաքացիություն, իհարկե, հրաժարվելով ԽՍՀՄ քաղաքացիությունից: Դրանից հետո նրանք իրավունք կունենան մասնակցել պառլամենտական ընտրություններին:

- Իսկ ինչպե՞ս է այդ տարբերակը ընդունվում:

- Լատիշների կողմից բացասականորեն: Ընդհանրապես, պետք է տրվի անհատական ընտրություն անելու իրավունք:

Հարցն այն է, թե ո՞ր պառլամենտը պետք է տա Լատվիայում ապրող ԽՍՀՄ քաղաքացիներին քաղաքացիության իրավունք հի՞նը, թե՞ նոր ստեղծվածը:

Պետք է հիշել, որ քաղաքացուն բռնի ուժով չպետք է սպիտել հրաժարվել ԽՍՀՄ քաղաքացիությունից:

- Այսինքն, օտար երկրի քաղաքացին կարո՞ղ է հանգիստ ապրել Լատվիայում:

- Անշուշտ:

- Վերակառուցման ընթացքում դեմոկրատական շարժումների առաջացումն ու համագործակցությունը շատ դրական արդյունքներ տվեց: Սակայն, եթե ընդհանուր ժողովրդավարական սկզբունքների հաստատման հարցերում լիարժեք միասնականություն էր դրսեւորվում, ապա ազգամիջյան հարաբերությունների հարցում, այնուամենայնիվ, զգացվում էր զգուշություն, տակտիկական բնորոշումներ, թեեւ մամուլում, հեռուստատեսությունում կամ ռադիոյում հնչում էին առանձին գործիչների օբյեկտիվ ելույթներ, սակայն կոնկրետ քաղաքական գնահատականներ չէին տրվում: Ի՞նչ ես կարծում, այժմ անկախությունից հետո Ձեզ մոտ կփոխվի՞ գործելու հնարավորությունների շրջանակը:

- Անկախացումից հետո Հայաստանի քաղաքացիներ կլինեն եւ մեզ մոտ, ինչպես նաեւ ադրբեջանցիներ, դա էլ ազդում է այս կամ այն կազմակերպության, նաեւ պաշտոնական հայեցակետի վրա:

Այլ են միջպետական հարաբերությունները: Եւ մանավանդ միջազգային ճանաչումից եւ միջազգային կազմակերպության՝ ՄԱԿ-ի անդամ դառնալուց հետո, մենք նոր հնարավորություններ ենք ստանում: Մեր դիրքորոշման արտահայտմամբ՝ ասել, թե ինչ է կատարվում ԼՂԻՄ-ում, պահանջել մարդու իրավունքների պահպանում: Եւ հենց այստեղ մենք կարող ենք համագործակցել, բանի դեռ Հայաստանը չի դարձել նման կազմակերպության անդամ:

- Հիշում եմ, Լատվիայի, Լիտվայի եւ Էստոնիայի ժողովրդական ճակատների միջնորդության առաքելությունը, առաջին հանդիպումները: Այդ ամենը կարծես անցավ եւ մոռացության մատնվեց: Ի՞նչ է, նրանք այլեւս հույս չունե՞ն, թե կարող են օգտավետ լինել, թե՞ շարժվում են «չընմիջամտելու» սկզբունքով:

- Եթե նայենք ժողովրդական ճակատի մամուլը, ապա կնկատենք, որ այն միշտ հանդես է եկել մարդու իրավունքների պահպանման դիրքերից: Դրանում կասկած չկա: Ինչ վերաբերում է միջնորդությանը, ես դժվարանում եմ ասել, թե դա ինչպես էր ծրագրված: Այժմ, իրական ազդեցություն կունենա ՌԽՖՍՀ-ն կամ ԽՍՀՄ-ը՝ ուժեղները, իսկ ինչ վերաբերում է Մերձբալթյան հանրապետությունների ժողովուրդներին, ապա Ադրբեջանի ղեկավարությունը դժվար թե ընդունի նման միջնորդների:

- Բայց կառավարությունները ու իշխանությունները գոնե կարող էին ինչ-որ կարծիք հայտնել: Ես չեմ ասում, որ անպայման պաշտպանեին հայերին: Թող օբյեկտիվ գնահատական տային: Ի դեպ, Ղարաբաղյան կոնֆլիկտին միշտ խանգարել է հենց երկու կողմերին տրվող գնահատականների հավասարեցումը:

- Բայց պետք է նաեւ մեզ հասկանալ, որ այն ժամանակ դա կախված էր Մոսկվայի հետ ունեցած հարաբերություններից, չնայած չեմ ժխտում նաեւ այն, որ միգուցե իշխանություններին պետք էր ավելի հրատակ դիրքորոշում ցուցաբերել: Բայց իրականում դա իրոք շատ դժվար խնդիր էր:

Իհարկե, նշանակություն կունենա անցած տարիների բարեկամությունը, բայց հիմա, նոր պայմաններում միասնությունը կրթելադրվի մեր անկախությամբ:

Զրույցը վարեց Իսկրա ԱՍԱՏՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Իրանը նոր մեկուսացման վտանգի առջեւ

Հարաբերությունների մշուշոտ հեռանկարներ

Քաղաքական մեկուսացումից դուրս գալու ուղղությամբ Իրանի իշխանությունների կողմից գործադրվող բոլոր ջանքերն առայժմ ցանկալի արդյունք չեն տալիս: Պարսից ծոցի դաշտերազմից հետո նկատվող դրական տեղաշարժերը, հատկապես շրջանում խաղաղության նոր երաշխիքների ապահովմանն ուղղված համատեղ ջանքերը, ձախողվում են: Վերջին շրջանում բավականին լարված մթնոլորտ է ստեղծվել Թեհրանի, Անկարայի, Քուվեյթի եւ Կահիրեի միջեւ: Մյուս կողմից, լարվածություն է ստեղծվել նաեւ իրանա-ֆրանսիական եւ իրանա-իտալական հարաբերություններում: Աջնանը կայանալիք Միտերանի այցը հետաձգվում է Շահփուր Բախթիարի սպանության դաշտառով: Իտալիայի վարչապետ Անդրեոտին, որ մտադրվել էր սեպտեմբերի կեսերին այցելել Իրան, անորոշ ժամկետով հետաձգեց իր այցելությունը՝ առանց նշելու դրա դաշտառները: Իտալիայի վարչապետի այցելության օրերին նախատեսված էր Թեհրանում զոմարել իրանա-իտալական համատեղ տնտեսական հանձնախմբի նիստ: Անշուշտ, Արեւմուտքի հետ վերահաստատվելիք կապերին խոչընդոտում է ահաբեկչության նոր ալիքը, որի համար մեղադրվում է Իրանը: Հիշեցնում ենք, որ վերջերս Սալման Ռուշդիի գրքի իտալերենի թարգմանիչը Միլանում մահափորձի է ենթարկվել:

Սակայն Իրանին առայժմ ավելի շատ մտահոգում է շրջանի պետությունների հետ քաղաքական հարաբերությունների ապահովումը: Սեպտեմբերի 1-ին Իրանի իսլամական հանրապետության շահերի պաշտպանության կահիրյան ասյանի պատասխանատու Ալի Ասղար Մոհամմադին Եգիպտոսի արտգործնախարարին հայտնեց Կահիրեի հետ բարեկամական կապեր հաստատելու Թեհրանի ցանկության մասին, որը գոհունակությամբ ընդունվեց Եգիպտոսի արտգործնախարար Ամրո Մուսայի կողմից:

Սակայն այդ հանդիպումից մի քանի օր հետո Իրանը արտգործնախարար Վելայաթին ընդգծիցներ հետ հանդիպման ժամանակ նրանց, որ [illegible] Կահիրեի կառավարության կողմից [illegible] Ջեյմս Դեյվիդի դայմանագիրը չի նպաստում երկու երկրների հարաբերությունների բարելավմանը: Վելայաթին հետեց Եգիպտոսի ռազմական ճամբարի եւ միջազգային լրատվական գործակալությունների կողմից հրապարակված այն հաղորդագրությունը, ըստ որի Իրանի իսլամական հանրապետությունը Եգիպտոսի նախկին արտգործնախարար Իսմեթ Արդալ Համիդից խնդրել է միջնորդել Թեհրանի եւ Կահիրեի միջեւ եւ ավելացրեց, որ հարաբերությունների բարելավման համար ավելի շատ շահագրգռված է Եգիպտոսը: Վելայաթիի այդ խոսքերից հետո Եգիպտոսի արտգործնախարարը զգուշացրեց Իրանի իշխանություններին՝ չմիջամտել իրենց չվերաբերող գործերին, ավելացնելով, որ Իրանը արաբական երկրների համար ընդամենը մի սովորական հարեւան է: Իրանցիները, նշեց Եգիպտոսի արտգործնախարարը, պետք է զգույշ լինեն սեփական արտահայտություններում:

Սեպտեմբերի 11-ին Իրանի իսլամական հանրապետությունում հավատարմագրված Քուվեյթի դեսպանը հանդիպեց Իրանի արտգործնախարարության ներկայացուցչի հետ: Ըստ Իրանի ռադիոյի, հանդիպման ժամանակ պետք եղավ նախագահ Ռաֆսանջանիին Քուվեյթ հրավիրելու մասին, սակայն այդ հանդիպումից մի քանի օր հետո Իրանը խիստ բողոքեց Քուվեյթի եւ ԱՄՆ-ի միջեւ ռազմական համագործակցության մասին կնքված դաշինքը: Օգոստոսի վերջերին ստորագրված ռազմական դաշինքի համաձայն, Քուվեյթն առնվազն 10 տարի ԱՄՆ-ի հետ ռազմական ուժերին պետք է տրամադրի ծովային եւ օդային բազաներ: Քուվեյթը մտադիր է այդպիսի դաշինք կնքել նաեւ Լոնդոնի հետ: Ըստ Իրանի ռադիոյի մեկնաբանի, ԱՄՆ-Քուվեյթ ռազմական դաշինքը նպաստակ ունի օրինականացնել Վաշինգտոնի ռազմական ծրագրերը, որը թույլ կտա ԱՄՆ-ին Պարսից ծոցի շրջանում իրականացնել ավելի լայնածավալ ռազմական գործողություններ:

Այդ մեկնաբանությունից հետո Իրանի փոխնախագահ Հասան Հաբիբին հերթական մամուլի ասուլիսում, որը կայանում է յուրաքանչյուր երկուշաբթի, նախարարաց խորհրդի նիստի ավարտից հետո, խիստ քննադատելով այդ դաշինքը, այն գնահատեց որպես վտանգավոր միջոցառում՝ ուղղված շրջանի անվտանգությանը:

Հարաբերությունների սրման միտում կա նաեւ Իրանի եւ Թուրքիայի միջեւ: Իրանի ռադիոյի հաղորդագրությունների համաձայն, սեպտեմբերի 13-ին Իրանը խիստ բողոք է ներկայացրել Թուրքիային այն բանի համար, որ Անկարան Թեհրանին մեղադրում է քուրդ ադատամարտիկներին եւ անջատողականներին զորակցելու եւ հակաթուրքական կրքեր բորբոքելու մեջ:

Իրանի ռադիոն ավելացրեց, որ Թուրքիայի դեսպանը Թեհրանում հրավիրվել է արտգործնախարարություն, որտեղ Իրանի արտգործնախարարի տեղակալ Բորուջերդին, ի պատասխան Թուրքիայի արտգործնախարարի այն զգուշացումների, թե իբր Իրանը հովանավորում է քուրդ անջատողականներին, հանձնել է Իրանի կառավարության բողոքագիրը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 10-ին Քոդսանի բանվորական կուսակցության (PKK) զինված ուժերի եւ թուրքական բանակի միջեւ Իրան-Թուրքիա-Իրաք սահմանագլխում տեղի ունեցած բախումների ժամանակ սպանվել եւ վիրավորվել են 10 թուրք զինվորներ: Այդ միջադեպերից հետո Անկարան Թեհրանին մեղադրեց, որ Իրանի սահմանապահները քուրդ ահաբեկիչներին օգնել եւ աջակցություն են տվել Իրանում:

Անաստիլական կիսապաշտոնական լրատվական գործակալության հաղորդագրությունների համաձայն, Անկարան Թեհրանից պահանջել է անհապաղ Թուրքիային հանձնել Իրանում ապաստանած քուրդ ահաբեկիչներին: Նշենք, որ վերջերս թուրքական բանակի շտաբի պետը նույնպես մեղադրել է Իրանին՝ քուրդ անջատողականներին օգնություն տրամադրելու մեջ:

Չնայած Իրանի իսլամական հանրապետությունը Իրան-Թուրքիա-Պակիստան համագործակցության՝ ECO-ի անդամ է, ամենաբարձր մակարդակով կազմակերպվում են փոխադարձ այցելություններ, եւ աճում է ապրանքափոխանակության ծավալը, սակայն քաղաքական եւ դիվանագիտական հարաբերությունները երկու հարեւան պետությունների միջեւ միշտ լարված են եղել:

Անշուշտ, Թեհրան-Անկարա հարաբերություններին մեծ վնաս հասցրեց Թուրքիայում իրանական գաղտնի ահաբեկչական կազմակերպության հայտնաբերումը, որը մեղադրվում է Շահփուր Բախթիարի սպանության մեջ:

Գ. ՍՏԱՓԵԼՅԱՆ

Ֆրանսիայի եւ Իրանի արտգործնախարարների հանդիպումը

Ինչպես հաղորդում է Թեհրանի ռադիոն, Ֆրանսիայի եւ Իրանի արտգործնախարարներ Ռոլան Դյուման եւ Ալբար Վելայաթին հինգշաբթի, սեպտեմբերի 26-ին զրույց են ունեցել Նյու Յորքում, ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի ընթացքում: Դա Ֆրանս-իրանյան նման մակարդակի առաջին հանդիպումն է Փարիզյան արվարձաններից մեկում օգոստոսի 3-ին շահի նախկին վարչապետ Շահփուր Բախթիարի սպանությունից հետո, որի մեջ կասկածում է, թե խառն է Թեհրանի ներկա վարչակարգը:

Ըստ Իրանի ռադիոյի, Դյուման եւ Վելայաթին համաձայնության են եկել հաճախակի դարձնել Փարիզի եւ Թեհրանի հանդիպումները վերջնականապես կարգավորելու համար երկու երկրների միջեւ ֆինանսական կնճիռը: Վեճը վերաբերում է մոտավորապես մեկ միլիարդ դոլլարին, որ 1975 թ. շահի վարչակարգը համաձայնվել էր փոխանցել Ատոմային էներգիայի Ֆրանսիական կոմիսարիատին: Ֆրանսիան արդեն փոխանցել է 630 միլիոն դոլլար: Մնում է կարգավորել շահաբաժինների խնդիրը: Թեհրանի ռադիոն չի հիշատակել Ֆրանսուա Միտերանի Իրան այցելության մասին, որ ծրագրվել էր հոկտեմբերի սկզբներին, ինչը սակայն շատ դիվանագետներ այսօր անհավանական են համարում Շահփուր Բախթիարի սպանության պատճառով:

ՅՈՒՆԱ ԳՈՇ

Մարոկոյի թագավորը խոստանում է աջակցել խաղաղության հարցում

Նախագահ Բուշը հինգշաբթի, սեպտեմբերի 26-ին խոսացավ Հասան 2-րդին, ընդունելով նրան Սպիտակ տանը, Մերձավորարեւելյան խնդիրը կարգավորելիս հիմնվել «խաղաղության դիմաց՝ տարածքներ» սկզբունքին, սակայն չկարողացավ առնել նրա բացահայտ համաձայնությունը խաղաղության խորհրդաժողովին Մարոկոյի մասնակցության վերաբերյալ: Ըստ Մերձավորարեւելյան հարցերով պետքարտուղարության պատասխանատու Ֆրեդերիկ Վիլանդի, Հասան 2-րդը Բուշին ասել է, թե Իսրայելի դիրքը «դժվարություններ» է հարուցում եւ թե ինքը շաբաթավերջին Նյու Յորքում պետք է շարունակի իր հանդիպումները «խաղաղության գործի մեջ առավել ներառնված երկրների հետ որոնելու համար այն համարժեք դերը», որ պետք է խաղան Մաղրեբի երկրները:

Հասան 2-րդը խոստացավ, որ Մարոկոն «շարունակ Միացյալ Նահանգների կողքին կլինի» խաղաղության հարցում, ավելացնելով, թե Ծոցի ճգնաժամը հնարավորություն տվեց մտածելու, որ «պարտավոր ենք դնել միջազգային օրինականության վրա»: Մենք անկեղծորեն հավատում ենք, ասաց նա, որ նույն օրինականությունը կիրառվի նաեւ Մերձավորարեւելյան կոնֆլիկտի հարցում», որպեսզի բոլոր կողմերն ստանան այն, «ինչին արժանի են»: Միաժամանակ Բուշը խրախուսեց Հասան 2-րդի կողմից ձեռնարկված տնտեսության եւ քաղաքականության ազատականությունը եւ ողջունեց քաղաքացիական ազատությունների ազատումը: Նա ընդգծեց նաեւ Մարոկոյի թագավորի, քաջությունը, որ համաձայնվել էր ՄԱԿ-ի ծրագրի հետ, որով նախատեսվում է 1992-ի սկզբներին արեւմտյան Սահարայում ինքնորոշման հանրաքվե անցկացնել: Բուշը հավաստել է, որ Միացյալ Նահանգները կցանկանային ՄԱԿ-ի «այս ծրագրին հավատարիմ» մնալ:

ՅՈՒՆԱ ԳՈՇ

Մուջահեդները կժամանեն Մոսկվա

Պանկինը Նյու Յորքում կննարկի Աֆղանստանի խնդիրը

Աֆղանական ընդդիմության չափավոր խմբավորումների ներկայացուցիչները մտադիր են շուտով ժամանել Մոսկվա՝ բանակցությունների: Այդ մասին հայտարարեց ԽՍՀՄ արտգործնախարարության պատասխանատու ափխազական [illegible]: «Դիվանագիտական համայնապատկերի» շրջանակի հետ զրույցի ժամանակ նա նշեց, որ խնդիրը հավանաբար կլուծվի 2 շաբաթվա ընթացքում: Մոսկվայում կայանալիք հանդիպմանը կմասնակցեն «Մջահիդ» խմբավորման ներկայացուցիչները: Հնարավոր է, որ ժամանեն նաեւ «Խալկ-մաշիար» եւ «Հայ[illegible]» խմբավորումներից: Սակայն լիազորության վստահություն չկա, քանի որ այդ խմբավորումներն ծայրահեղական դիրքորոշման կողմնակիցներ են: «Այստեղ թե այնտեղ, մենք պատրաստ ենք բանակցել բոլոր նրանց հետ, ովքեր կամենան: Մեզանից բացի տեղի ունեցող ամեն մի զրույց ավելի արդյունավետ է, քան ուրիշների փոխանակությունը ընդունողների միջոցով»,- նշեց նա:

Նա ասաց նաեւ, որ ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Բորիս Պանկինը Նյու Յորքում մի շարք հանդիպումներ կունենա ԱՄՆ-ի, Պակիստանի, Իրանի եւ մյուս պետությունների ներկայացուցիչների հետ՝ աֆղանական խնդիրը լուծելու հարցով:

Ինչպես նշեց դիվանագետը, խորհրդային ռազմագերիների ազատագրման հարցը մնում է առաջնային: Սակայն չի կարելի Աֆղանստանի իրավիճակի կարգավորման խնդիրը նույնացնել դրա հետ: Կարգավորումը պայմանավորվածությունների ամբողջականությունն է:

Դիվանագետի կարծիքով, Աֆղանստանի «լիբանանացման» սպառնալիքը իրոք կա: Անհարժեշտ է թույլ չտալ, որ Աֆղանստանը վերածվի «լարակոծ վերմակի», այն էլ՝ ընդառաջ ԽՍՀՄ-ի սահմաններին: Հենց այդ նպատակին է ուղղված Խորհրդային Միության ջանքերը: Մոսկվան եւ Վաշինգտոնը արդեն արել են առաջին քայլը՝ հանդես գալով Միացյալ հայտարարությամբ: Ըստ այդ հայտարարության, ԽՍՀՄ-ը եւ ԱՄՆ-ը 1992 թ. հունվարի 1-ից կդադարեցնեն զենքի մատակարարումը Աֆղանստանին: «Սակայն,- նշեց դիվանագետը,- շատ բան այժմ կախված է ոչ միայն մեզնից, այլեւ աֆղանական ընդդիմությունից»: ■

Պաղեստինցիների ձերբակալություններ գրավյալ տարածքներում

Իսրայելական բանակը, ոստիկանությունը եւ անվտանգության ծառայությունները վերջին երկու ամիսներին ձեռնարկել են Ինտիֆադայի ակտիվիստ չորս հարյուր վաթսուն պաղեստինցիների ձերբակալությունը, որոնցից չորս հարյուր քսանը Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատի մարտիկներ են, հայտարարել է հինգշաբթի, սեպտեմբերի 26-ին իսրայելական զինվորական մի բանբեր: Այսրհորդանանի եւ Գազայի գրավյալ տարածքների շատ շրջաններում, ինչպես նաեւ երուսաղեմում միաժամանակ ձեռնարկված գործողությունների ընթացքում ձերբակալվել են խաղաղ բնակչության սպանության մեղադրանքով եւ իսրայելցիների հետ համագործակցության մեջ կասկածվող պաղեստինցիներ, ասել է բանբերը: ■

ԻՓԵ-ի նախագահի ձերբակալությունը

Իսլամական փրկության ճակատի «ժամանակավոր» նախագահ Աբդելկադեր Հաշանին ձերբակալվել է Ալժիր մայրաքաղաքում ուրբաթ, սեպտեմբերի 27-ին, այսինքն՝ արտակարգ դրության վերացումից քառասունութ ժամ առաջ, հայտարարել է ԻՓԵ-ն մի կոմյունիկեում: Հաշանին, որ իրեն համարում է հունիսի 30-ին ձերբակալված Աբասի Մադանիի եւ Ալի Բելհաջի զինակիցը, կալանվել է կուսակցության նստավայրում, ըստ ԻՓԵ-ի կոմյունիկեի, որը այդ քայլը համարում է «լմտածված», «ունակ՝ երկիրը քաշել նոր վիճակի մեջ, որի համար պատասխանատու են միմիայն իշխանությունները»: ԻՓԵ-ի ժամանակավոր նախագահը ուրբաթ օրվա աղոթքի առթիվ իր քարոզում քննադատել է «մզկիթների աթոռանիստին» եւ հայտարարել, որ օրինաթաի ուժերը նույն օրը հայտնվել են Բաթ էլ Եսեդ մզկիթի շրջանում:

ՅՈՒՆԱ ԳՈՇ, Ռոյթեր

Յակոբ Եպս. ԳԼԸԼԸՆՃԵԱՆ. «Ուրուգուայը պիտի ճանչնայ Հայաստանի անկախութիւնը»

– Սրբազան, Ձեր այս այցելութիւնը զուգադիպեցաւ պատմական իրադարձութեան մը՝ Հայաստանի անկախութեան հռչակումին. ի՞նչ են ձեր տպաւորութիւնները, զգացումները եւ մտածումները այս օրերուն:

– Ես Հայաստան հասայ ճիշդ հանրաքուէի օրը: Իսկապէս որ ամենուրեմ խանդավառութիւն կը տիրէր, ես չէի պատկերացներ, որ այսքան միահամուռ կերպով մեր ժողովուրդը հաջարար իր կամքը պիտի արտայայտէր հանդէպ անկախութեան: Մենք սփիւռքահայերս, ինչպէս գիտէք, բարիին եարտաղանը տեսած ըլլալով, գիտենք թէ ինչ կը նշանակէ բոլորովին



Լուսանկարը՝ Դաւիթ ՄԱԼՈՅԱՆԻ

անկախ ըլլալ եւ մեր ձեռքով տնօրինել մեր ճակատագիրը: Մեր մտահոգութիւնը եղած է մեր հայրենիքին աշխարհագրական դիրքը եւ ատկէ ենթադրող ազգային աղէտի մը հետեւանքներուն գիտակցումը, յատկապէս Թուրքիան նկատի ունենալով: Բայց ինչպէս ըսի առաջ կ'ըսէի, ես տեսայ, որ մեր ժողովուրդը խանդավառ է, վստահ իր ուժերուն եւ ոչ մէկ բանէ վախցող: Անկախութեան միահամուռ դրսեւորումը որպէս հրաբուխ ժայթքեցաւ մեր ժողովուրդի սրտէն: Ես կը շնորհաւորեմ մեր ժողովուրդին այս դիրքորոշումը, այն իմաստով, որ ան տնտեսական դժուարութիւններու գնով իսկ, ալ պիտի չուզէ կաշկանդուած ապրիլ եւ որիշներուն ենթակայ ըլլալ: Մանչելի բան է ասիկա, որ պատիւ կը բերէ մեր ժողովուրդին: Իմ մտահոգութիւններս որոշ չափով փարատեցան, երբ տեսայ, որ մեր ժողովուրդին առողջ տարրը անկախութիւն ըսելով չի հասկնար անջատում մեր բարեկամներէն, մասնաւորապէս Ռուսաստանէն: Փոքր ազգեր պէտք ունին նեցուկի, ամօթ բան չէ ասիկա, որիշ բան երկիրներու պարագային աղ նոյնն է, մենք եւս մեզի յարմար նեցուկ գտած ենք եւ պիտի գտնենք. ասիկա Ռուսաստանն է: Եւ ես ցաւ բարեւում վստանգը, որոնց եւ ապրիլեանցիներուն հետ երկար սահման ունինք, այդ սահմաններուն աղահովութիւնը մեզի համար առաջնահերթ է: Ազատ, անկախ Հայաստան, բայց միաժամանակ աղահով սահմաններով Հայաստան՝ այս է մեր նշանաբանը:

– Սրբազան հայր, անկախութեան հռչակումէն ետք բնական է, որ Հայաստան պիտի ձգտի միջազգային ճանաչում ձեռք ձգել: Այս իմաստով մենք գիտենք, թէ Ուրուգուայ միշտ դրական վերաբերմունք ունեցած է Հայաստանի եւ հայ ժողովուրդի արդար հարցերուն նկատմամբ: Կը կարծէ՞ք, թէ Ուրուգուայը պիտի ըլլայ այն պետութիւններու շարքին, որոնք պիտի ճանչնան Հայաստանի անկախութիւնը:

– Ուրուգուայը միշտ համակրանք ունեցած է հայկական հարցերուն հանդէպ: Պատահական չէ, որ Ուրուգուայի պետութիւնը առաջինը եղած է հայկական ցեղասպանութիւնը ընդունողը: Ես կը կարծեմ, թէ Ուրուգուայի պետութիւնը առաջիններէն պիտի ըլլայ Հայաստանի անկախութիւնը ճանչցողներուն մէջ: Այս ուղղութեամբ դրական տրամադրութիւն կայ Ուրուգուայի պետական իշխանութեանց մօտ: Ես հանդիպեցութեան նախագահին հետ առիթ ունեցած եմ անձամբ խօսելու, որուն ընթացքին ան նոյնիսկ փափաք յայտնեց այցելելու Հայաստան: Նման այցելութիւն մը գործնականապէս պիտի դիւրացնէ Հայաստանի անկախութեան ճանաչումը:

– Սրբազան հայր, պատմեցէք խնդրեմ ուրուգուահայ գաղութի ազգային-եկեղեցական կառոյցներուն, ինչպէս՝ նաեւ քաղաքական մթնոլորտին մասին:

– Ուրուգուահայ գաղութը խայտաբղէտ գաղութ մըն է ազգային տեսակէտով: Զանազան կազմակերպութիւններ կան, որոնք ազգային եռուն կեանք մը ստեղծած են: Դժբախտաբար կան նաեւ հակամարտութիւններ: Հիմնականը սակայն Հայց. Առաքելական եկեղեցւոյ գոյութիւնն է, որուն կողքին կայ ազգային-թեմական վարժարանը: Կը գործեն նաեւ ՀԲԸ Միութեան Ալեք Մանուկեան երկրորդական վարժարանը եւ Նուպարեան նախակրթարանը, որոնք մեծ դեր կը կատարեն հայեցի դաստիարակութեան գծով: Կը գործեն ռասիոլսարաններ, ինչպէս *«Ռասիո Արմենիա»*ն *«Կոմիտաս»*ը, *«Թէմնանի Ձայն»*ը եւ հնչակեաններու ռասիո ժամը, որոնք մամուլի դեր կը կատարեն: Կը գործեն նաեւ ազգային առանձնական կուսակցութիւններ եւ հայրենակցական միութիւններ: Բարեբախտաբար այս տարի առաջին անգամ ըլլալով կրցանք միասնաբար ցոյց կազմակերպել, որ կարեւոր իրագործում էր գաղութին համար: Ես անձամբ դէմ եմ պառակտումներուն եւ կը կարծեմ, որ իւրաքանչիւր կազմակերպութիւն պէտք է ձգտի ազգային համերաշխութեան: Ընդհանուր առմամբ գոհ եմ գաղութէն, սակայն ցաւս խառն ամուսնութիւններն են: Դաս լաւ հասկնալով, որ սփիւռքը վերջնական նպատակ չէ, այսուհանդերձ մենք մեծ գործ ունինք հայկական ազգային եւ կրօնական արժէքները շարունակելու, հայ կեանքը երկարաձգելու՝ ի նպաստ մեր ժողովուրդին եւ հայրենիքին:

– Սրբազան հայր, Հայաստանի օգնութեան համար ի՞նչ ըրած է ուրուգուահայ գաղութը առ այսօր:

– Ուրուգուահայութիւնը թէեւ տնտեսապէս համեստ կարողութիւններու տէր է, այնուամենայնիւ կրցաւ երկրաշարժէն ետք աղէտեալներուն համար 110 հազար դոլարի արժողութեամբ դեղօրայք եւ ուտեստեղէն հայթայթել: Այդ օգնութիւնը ես անձամբ յանձնեցի Մայր Աթոռ ս. Էջմիածնին, իսկ մայիս ամսուն՝ 32 հազար դոլար արժողութեամբ 20 բոնն փոշի կաթ, որ նոյնպէս ս. Էջմիածնին յանձնուեցաւ:

Թղթակցութիւնը՝ Դաւիթ ԹԱԼՈՅԱՆԻ

ԽՍՀՄ-ը առանց կասկածի կաջակցի նախագահ Ջ. Բուշի նախաձեռնութեանը,

ասում է Խ. Միութեան նախագահը

«ԽՍՀՄ-ն առանց կասկածի կաջակցի Ջ. Բուշի նախաձեռնութեանը»: Այդ մասին հայտարարեց ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովը լրագրողների հետ հանդիպման ժամանակ, որը կայացաւ Ավստրիայի կանցլեր Ֆրանց Վրանիցկու հետ ունեցած բանակցութիւններից հետո: Դրա հետ մեկտեղ, ինչ վերաբերում է պատասխան որոշմանը, աղա նա առաջարկեց չշտապել: «Այդ հարցերում ԽՍՀՄ-ի եւ նրա նախագահի հաղթեղութիւնը կարող է զինաթափման ասպարէզում հանգեցնել չմտածված քայլերի», նշեց Մ. Գորբաչովը:

«Մենք պայմանավորուեցինք նախագահ Բուշի հետ կապի մեջ մտնել արտաքին գործերի նախարարության եւ այդ բարդ հարցերի լուծման հետ առնչվող մյուս գերատեսչությունների գլուխ»,- ասաց խորհրդային ղեկավարը: Նրա կարծիքով, անհրաժեշտ է պարզել ԱՄՆ-ի միջուկային զենքի արմատական կրճատման մասին միակողմանի նախաձեռնության բոլոր նրբերանգները:

«Ես չեմ կարծում,- շարունակեց նա,- որ բոլոր այս խնդիրների ուսումնասիրումը կարող է խանգարել ԱՄՆ-ին միակողմանիորեն այն իրականացնել, քանի որ դա նրանց միակողմանի նախաձեռնությունն է»:

Մ. Գորբաչովը հաղորդեց նաեւ, որ ԽՍՀՄ-ը արդեն հիմա առաջարկեց լայնացնել նախագահ Ջ. Բուշի նախաձեռնությունը. անվտանգության կոնցեպցիային ավելի վերջնական տեսք տալ եւ դադարեցնել միջուկային զենքի փորձարկումը: «Այդ քայլը շատ ժամանակին կլիներ»,- նշեց Մ. Գորբաչովը: Հակառակ դեպքում, նրա կարծիքով, դժվար է հասկանալ, թե ինչի համար են շարունակվում միջուկային զենքի փորձարկումները այն կրճատելուց հետո:

Հանդիպում Մասիսում

Մայր Հայրենիքում վերածնված Ռամկավար ազատական կուսակցության ծրագրերն ու գործունեությունը մեծ հետաքրքրություն էին առաջացրել Մասիսի շրջանում եւս, եւ նման հանդիպման անհրաժեշտությունը վաղուց էր հասունացել: Կազմակերպչական աշխատանքներն իր վրա վերցրեց ՌԱԿ «Մասիս» ակումբը, որն ավելի քան 7 ամիս է, ինչ գործում է շրջանում: Եւ ահա սեպտեմբերի 30-ին Մասիսի շրջկենտրոնի երաժշտական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ շրջանի բնակչության հանդիպումը ՌԱԿ-ի ղեկավարների հետ: Հանդիպմանը ներկա էին Մասիսի շրջանի գործադիր կոմիտեի նախագահ Գառնիկ Միքայելյանը, շրջանի ժողովրդական ու դատախազը, արտադրական ձեռնարկությունների ղեկավարներ, շրջանի մտավորականության ներկայացուցիչներ: ՌԱԿ-ի կողմից հրավիրված էին ՌԱԿ Կենտրոնական վարչության անդամ եւ ՌԱԿ Մամլո կենտրոնական Դիվանի նախագահ Երվանդ Ազատյանը (ԱՄՆ), ՌԱԿ Կենտրոնական վարչության անդամ, Հայաստանի տնտեսական զարգացման խորհրդի նախագահ Վարդան Ուզունյանը (Անգլիա), Կալիֆոռնիայի ՌԱԿ-ի պատասխանատու Գրիգոր Գրիգորյանը, Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հիմնադիր խորհրդի անդամ Ռուբեն Միրզախանյանը, Գեւորգ Ասլանյանը (ԱՄՆ), ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Վիգեն Խաչատրյանը: Հանդիպումը բացեց ՀՌԱԿ «Մասիս» ակումբի անդամ Սարգիս Ավետիսյանը: Հանդես գալով ներածական խոսքով, Վարդան Ուզունյանը նշեց, որ սույն թվականի հոկտեմբերին լրանում է ՌԱԿ-ի 70-ամյակը եւ ՌԱԿ-ը, 70 տարի անց վերադառնալով հայրենիք, հարազատ է մնացել իր որդեգրած քաղաքական գծին, որի հիմքը հայրենիքին ծառայելն է եւ ազգային տնտեսական քաղաքականություն վարելը՝ ազատ, շուկայական տնտեսության հիման վրա: Վ. Ուզունյանը հանգամանորեն կանգ առավ Հայաստանի տնտեսական զարգացման հարցերի վրա: Նա նշեց Երեւանում, իսկ ապա նաեւ շրջաններում բացվող ՌԱԿ-ի տնտեսական գրասենյակի կարեւորությունը, որն ընդարձակելու է հայրենիք-սփյուռք տնտեսական կապերը: Նշվեց նաեւ, որ հանրապետությունում հողի սեփականաշնորհումը լայն հնարավորություններ է ընձեռել գյուղատնտեսության զարգացման համար, որը եւ բարենպաստ պայմաններ է ստեղծում ՌԱԿ-ի մշակած գյուղատնտեսական ծրագրի իրականացման համար: Այնուհետեւ Վ. Ուզունյանը նշեց, որ տընտեսության հզորության գրավականը երկրի քաղաքական կայունությունն է, եւ որ ՌԱԿ-ը Հայաստանի Հանրապետության նախագահության թեկնածու առաջադրելով Լեւոն Տեր-Պետրոսյանին, հույս է տածում, որ վերջինս ի զորու է ապահովել նման իրավիճակ հանրապետությունում, մի գործիչ, որի հավատարիմությունն ու հեռատեսությունը չի վրիպել Ս. Բանտայի տերությունների քաղաքական շրջանների տեսադաշտից: Այնուհետեւ Երվանդ Ազատյանը ներկաներին հանգամանորեն ծանոթացրեց ՌԱԿ-ի նախաղահությանը եւ նրա քաղաքական գործունեությանը: Նշեց, որ իր արմատները սանելով Արմենական կուսակցությունից, լինելով ազգային հողի ծնունդ եւ ազգային գաղափարախոսության կրող, ՌԱԿ-ը պայքարել է Օսմանյան բռնակալության դեմ եւ 100 տարի կրելով այն, այժմ էլ փոխանցել է այդ գաղափարները մայր երկրին: Ե. Ազատյանը նշեց, որ օտարության մեջ գտնվելով հանդերձ, ՌԱԿ-ը գաղթօջախներում էլ հետաքրքիր է լինում իր որդեգրած դեմոկրատական սկզբունքներին, եւ այժմ անկախության ուղին բռնած Հայաստանում մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում ՌԱԿ-ի նկատմամբ, քանի որ կուսակցության որդեգրած սկզբունքները հոգեհարազատ են նաեւ հայրենաբնակ հայությանը:

Այնուհետեւ ՌԱԿ-ի ղեկավարներին տրվեցին բազմաթիվ հարցեր: Պատասխանելով հարցերին, Ռ. Միրզախանյանը նշեց, որ ՌԱԿ-ը չի ընդունում որեւէ կուսակցության կամ կազմակերպության զազմական ուժեր ունենալու իրավունքը եւ որ նման մենաշնորհ պետք է ունենա միմիայն պետությունը:

Այն հարցին, թե ո՞րն է արտերկրներից Հայաստանին տրվելիք օգնության վճռական պայմանը եւ ո՞ր երկրներից մենք օգնություն պետք է ակնկալենք, Վ. Ուզունյանը մեկ անգամ եւս նշեց, որ այդ պայմանը կայուն քաղաքական իրավիճակն է, շեշտելով նաեւ անհատական ներդրումների կարեւորությունը:

Այն հարցին, թե միանալու են արդյոք ՌԱԿ-ը եւ ՀՌԱԿ-ը, Ռուբեն Միրզախանյանը պատասխանեց, որ լինելով առանձին կուսակցություններ, երկուսն էլ գործում են միասին, եւ որ երկուսի վերջնական նպատակը միավորվելն է:

Պատասխանելով այն հարցին, թե ինչպե՞ս է ՌԱԿ-ը վերաբերվում Հայաստանի կողմից միջհանրապետական տնտեսական պայմանագրի ստորագրմանը, Ռ. Միրզախանյանը նշեց, որ նրա պայմաններում ՌԱԿ-ը այդ քայլը դրական է համարում, որովհետեւ իրերի ռնալ վիճակն այնքիսին է, որ առայժմ նոր որակի տնտեսական համաձայնություններ այդ երկրների հետ դեռեւս չկան, իսկ միանգամից հանրապետությունների հետ տասնամյակներով հաստատված տնտեսական կապերը խզելը մեզ ոչ մի լավ բան չի խոստանում: Իր հերթին Վ. Ուզունյանն ասաց, որ Հայաստանը զգում է այդ տուկայի կարիքը թե՛ որպես հումքի աղբյուր, թե՛ որպես արտահանման տուկա:

Պատասխանելով այն հարցին, թե ի՞նչ գործունեություն է ծավալել կուսակցությունը հոգեւոր կյանքի զարգացման ուղղությամբ, Ե. Ազատյանը նշեց Թեոնյան մշակութային միության ծավալած գործունեությունը Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս՝ հայ մշակույթը պրոպագանդելու ուղղությամբ: Իր խոսքում Ե. Ազատյանը նշեց, որ ծրագրվել է հրատարակել երիտասարդական մշակութային թերթ եւ ավելի աշխուժացնել հայ նշանավոր արվեստագետներին արտասահմանյան հանդիպումները ներկայացնելու գործը:

Այնուհետեւ հարց ուղղվեց Վ. Ուզունյանին, թե աղետի գոտու, մասնավորապես Կումայրիի վիճակը բնականացնելու, գործազրկությունը վերացնելու ուղղությամբ ի՞նչ աշխատանքներ է տանում ՌԱԿ-ը: Վ. Ուզունյանը պատասխանեց, որ մշակվել է երեք կոնկրետ ծրագիր այդ ուղղությամբ:

1. Խոշոր գումար հատկացնել փոքր արտադրական ձեռնարկություններ ստեղծելու համար եւ մեծ քանակությամբ մարդկանց ներգրավել այդ ձեռնարկությունների մեջ:

2. Կուսակցության ուժերով կարճ ժամանակում շարք մտցնել մի քանի դպրոց, որովհետեւ ուսումնական գործը վատագույն վիճակում է գտնվում:

3. Ստեղծել հնարավորություններ տեղական արտադրության արտահանումը կազմակերպելու համար:

Այն հարցին, թե ինչո՞ւ է ՌԱԿ-ը համագործակցել կոմունիստական Հայաստանի հետ, չբաժանելով հանդերձ սոցիալիզմի, կոմունիզմի սկզբունքները, Վ. Ուզունյանը պատասխանեց, որ խորհրդային իշխանության օրոք ՌԱԿ-ը, չբաժանելով համայնավարության սկզբունքները, այնուամենայնիվ համագործակցել է Հայաստանի հետ, որովհետեւ ազգային շահերը, հայրենիքի շահերը վեր է դասել նեղ կուսակցական շահերից: Ե. Ազատյանը պատմական ակնարկով ցույց տվեց, որ հանրապետության շրջանում (1918-20 թթ) ՌԱԿ-ը նույնպես համագործակցել է Հայաստանի Հանրապետության կառավարության հետ, իսկ Կիլիկիայում անկախություն հռչակած ռամկավար Միհրան Տամատյանը, ի նշան ազգային համաձայնության, պատրաստ է եռագույն դրոշը եւ ոչ թե կուսակցության դրոշը:

«Նոր օր» թերթի խմբագիր Հակոբ Պողոսյանը, լրացնելով վերոհիշյալ հարցի պատասխանը, նշեց. *«Արդյո՞ք պատերազմի տարիներին սփյուռքի մյուս ուժերի հետ միասին ՌԱԿ-ի նյութական միջոցներով ստեղծված «Մասունցի Դավիթ» տանկային շարասյան եւ այլ մարտական միջոցների տրամադրումը Խորհրդային Հայաստանին նպատակ չէր հետապնդում դիմագրավելու թուրքական ներխուժման վտանգը, չէ՞ որ տվյալ դեպքում ՌԱԿ-ը ավելի շատ շահագրգռված էր ոչ թե խորհուրդների հաղթանակով Գերմանիայի դեմ, այլ մայր Հայաստանի պաշտպանության խնդրով»:*

Եզրափակիչ խոսքում Ռ. Միրզախանյանը նշեց, որ վերջին հաշվով բոլոր կուսակցությունների գործունեության գնահատականը տալիս է ժողովուրդը, եւ նա պետք է որոշի, թե որ կուսակցությունը ինչի է արժանի:

Գ. ԳՈՒՐԳԵՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Հարավսլավիա. պատերազմի տրամաբանությունը

Մինչ միջնորդ ուժերի ժամանումն ավելի ու ավելի անիրական է թվում, բանակի աջակցությունը վայելող սերբերի եւ խորվաթների ընդհարումներն ուժեղանում են

Հարավսլավիայի ճգնաժամում, որը շաբաթներ շարունակ արյունահեղություն է առաջացնում Խորվաթիայում եւ սպառնում է ծավալվել հարեւան երջաններում, մասնավորապես Բոսնիայի ու Հերցոգովինայի հանրապետությունում, դարձյալ գերիշխում է *«պատերազմի տրամաբանությունը»*: Ճիշտ է, Հարավսլավիային նվիրված Հաագայի խորհրդաժողովի նախագահ լորդ Քարինգտոնին հաջողվեց սեպտեմբերի 17-ին հասնել հրադադարի, որը, Խորվաթիայի ու Սերբիայի նախագահներից բացի, ստորագրեց նաեւ Հարավսլավիայի բանակի ներկայացուցիչը, սակայն 24 ժամ անց ռազմական գործողությունները վերսկսվեցին:

Եւրոպական միավորման 12 երկրներն արդեն կասկածում են, թե հնարավոր է որեւէ ձեւով մեծացնել օսարերկրացի դիտորդների դերը Հարավսլավիայում: Միավորման երկրներն առայժմ տարակարծիք են Ֆրանսիայի առաջարկած եւ Գերմանիայի հավանությանն արժանացած միջնորդ ուժերի բնույթի ու ծավալի շուրջը: Եթե նույնիսկ սկզբունքային համաձայնություն ապահովվեր եւ նախագիծը կոնկրետ մշակվեր արեւմտաեւրոպական միության երջանակներում (որն այս հարցում միակ իրավասու այանն է), միեւնույնն է, եւրոպացիները պետք է սանային նաեւ Հարավսլավիայի համաձայնությունը, որն այս պահին խիստ անհավանական է: Բացի այդ, դժվար է պատկերացնել, թե միջնորդ ուժերն ինչպես կարող են այդ երկիրը մտնել հրադադարի կիրառումից առաջ: Այսպիսով, ամռան սկզբներին որոշ եւրոպացիների ունեցած լավատեսությանը հաջորդել է անզորության մի զգացում, եւ Հարավսլավիայի «գործը» եւրոպական համայնքի քաղաքականության մի լուրջ փորձառություն է դարձել:

Այսպիսով, ՄԱԿ-ին դիմելու Ֆրանսուա Միտերանի գաղափարը Ֆրանսիայի դիվանագիտության համար մնում է հնարավոր վերջին միջոցը: Բայց այստեղ էլ դժվարությունները շատ են. իրավաբանական ի՞նչ ուղիներով Անվտանգության խորհուրդը կկարողանա միջամտել այդ գործին: Իրենց վետոյի իրավունքը ինչպե՞ս կօգտագործեն տերությունները, որոնք ԽՍՀՄ-ի նման կարող են երկյուղել, թե Հարավսլավիայի ներկա խառնակությունները հանկարծ աղաղայում չկրկնվեն իրենց մոտ:

Իրոք, Հարավսլավիայում պետության նախագահությունը կոլեգիալ մարմին է, որին մասնակցում են 6 Ֆեդերատիվ հանրապետությունների եւ երկու ինքնավար երջանների ներկայացուցիչները: Ամեն տարի ընտրվող նախագահները առանձնահատուկ իշխանություն չունեն, եւ նրանք, պարզապես, հավասարների մեջ առաջինն են:

Այդ կոլեկտիվ մարմինն է պետության բարձրագույն իշխանությունը, եւ այս առումով ապահովում է զինված ուժերի ղեկավարությունը: Արդ, անվտանգության խորհրդին նաեւ ինչպե՞ս կարելի է սանալ Հարավսլավիայի հակամարտ կողմերի եւ իշխանությունների համաձայնությունը:

Հարավսլավիայի պետության ղեկավար, խորվաթ Ստիպե Մեսիչի վերջերս Անվտանգության խորհրդին ուղղած կոչը ՄԱԿ-ի բարձրագույն ասյանում շատ նիստ հրավիրելու վերաբերյալ կարող էր հիմք ծառայել, եթե դա անձնական նախաձեռնություն չլիներ եւ Հարավսլավիայում օրինական ուժ ունենար: Մեսիչը չէր ունեցել իր ամբողջ նախագահության աջակցությունը: Նա գործել էր մենակ, ինչպես մի քանի օր դրանից առաջ... Երբ բանակին վերջնագիր էր ներկայացրել, որպեսզի հեռանա Խորվաթիայից եւ վերադառնա իր զորանոցները:

Թեեւ Մեսիչի նախաձեռնությունը իրավական կջիո չունի. բայց փոխարենը դա քաղաքական խորություն է, որը համաղասասխանում է Հարավսլավիայի պետության նոր դրամատիկ փուլին. Խորվաթիայի իշխանությունները ցանկանում են ավելի ու ավելի միջազգայնացնել ճգնաժամը, փորձելով ապացուցել, որ բանակը վերջնականապես վտարվել է Խորվաթիայում, բռնելով Զագրեբի իշխանությունների դեմ ըմբոստացած սերբ փոքրամասնության կողմը եւ փաստորեն ծառայելով *«Սերբիայի իմպերիալիզմին... որը ձգտում է նվաճել Խորվաթիայի տարածքները»*: Այդ փաստարկը նշված է թե՛ զինված ուժերին ներկայացված վերջնագրում եւ թե՛ Ստիպե Մեսիչի ուղղած կոչի մեջ, որը իր երկու ուղերձներում էլ չի վարանում նշել, որ տեղի է ունեցել *«զինվորական հեղաբերջում»*, քանի որ զորքը ներկայումս գործում է սահմանադրական երջանակներից դուրս:

Մի քանի ամիս առաջ բանակը դեռ չեզոք էր ձեւանում: Զինվորականները միջամտում էին եւ բաժանում սերբ ու խորվաթ հակամարտ կողմերին: Այդ ժամանակ բանակից դիմելով, Մեսիչը չէր ունեցել իր ամբողջ նախագահության աջակցությունը: Նա գործել էր մենակ, ինչպես մի քանի օր դրանից առաջ... Երբ բանակին վերջնագիր էր ներկայացրել, որպեսզի հեռանա Խորվաթիայից եւ վերադառնա իր զորանոցները:

Թեեւ Մեսիչի նախաձեռնությունը իրավական կջիո չունի. բայց փոխարենը դա քաղաքական խորություն է, որը համաղասասխանում է Հարավսլավիայի պետության նոր դրամատիկ փուլին. Խորվաթիայի իշխանությունները ցանկանում են ավելի ու ավելի միջազգայնացնել ճգնաժամը, փորձելով ապացուցել, որ բանակը վերջնականապես վտարվել է Խորվաթիայում, բռնելով Զագրեբի իշխանությունների դեմ ըմբոստացած սերբ փոքրամասնության կողմը եւ փաստորեն ծառայելով *«Սերբիայի իմպերիալիզմին... որը ձգտում է նվաճել Խորվաթիայի տարածքները»*: Այդ փաստարկը նշված է թե՛ զինված ուժերին ներկայացված վերջնագրում եւ թե՛ Ստիպե Մեսիչի ուղղած կոչի մեջ, որը իր երկու ուղերձներում էլ չի վարանում նշել, որ տեղի է ունեցել *«զինվորական հեղաբերջում»*, քանի որ զորքը ներկայումս գործում է սահմանադրական երջանակներից դուրս:

Մի քանի ամիս առաջ բանակը դեռ չեզոք էր ձեւանում: Զինվորականները միջամտում էին եւ բաժանում սերբ ու խորվաթ հակամարտ կողմերին: Այդ ժամանակ բանակից շատ չէին դժգոհում, թեեւ խորվաթները նրան հանդիմանում էին արդեն «ապստամբներին» պաշտպանելու համար, իսկ սերբերը բանակին մեղադրում էին ուշ միջամտելու համար, երբ արդեն զոհեր էին լինում: Բայց այդ իրավիճակը ժամանակավոր էր: Պատերազմի սանձազերծմանը կարող էր խանգարել միայն քաղաքական համաձայնությունը Խորվաթիայի իշխանությունների եւ սերբ փոքրամասնության միջեւ, որը որոշել էր Հարավսլավիայի Ֆեդերացիայի կազմում մնալ Խորվաթիայի անջատման դեպքում: Եւ քանի որ փոխզիջման որեւէ հույս չկար, ճգնաժամը վերածվեց զինված առճակատման. մի կողմից Զագրեբի իշխանությունները փորձում էին իրենց վերահսկողությունը հաստատել ամբողջ հանրապետությունում, այդ թվում սերբական երջանների, ինչպես նաեւ բանակի նկատմամբ, մյուս կողմից սերբական միլիցիան զինվորական միավորումների աջակցությամբ փորձում էր ապահովել սեփական տարածքի անվտանգությունը:

Այդպիսով, կոնֆլիկտի բնույթը փոխվեց, եւ այն վերածվեց մի անզիջում կանոնավոր ճակատամարտի, որտեղ բանակը ավելի ու ավելի էր ներքաշվում, քանզի վերջնական նպատակն այն սահմանն էր, որը մի օր անկախ Խորվաթիան բաժանելու էր Հարավսլավիայի մնացած մասից: Եւ քանի որ այդ պատերազմում կորցնող կողմը Զագրեբն է, Խորվաթիայի իշխանությունները վերջին օրերին ուրիշ միջոցների դիմեցին: Հարձակում կատարվեց սեփական տարածքում բանակի զորանոցների վրա, որի սերբամետ դիրքորոշումը, Զագրեբի իշխանությունների կարծիքով, այս ամենի պատճառն է:

Այդ գործողությունն էլ ավելի ընդլայնեց կոնֆլիկտը. բանակում ուժեղանում է դիմադրությունը, շատանում են դասալիքները:

Սա մի դրամատիկ զարգացում է, որը ուղղակիորեն առնչվում է պատերազմի տրամաբանությանը:

«Լը Մոնդ»

Թուրքիան ամրացնում է իր կապերը միութենական հանրապետությունների հետ

Վերջին իրադարձությունները թուրք մեկնաբանի գնահատմամբ

«Հյուրիյեթ», սեպտեմբերի 25. «Ղազախստանի նախագահ Նազարբաեւն այսօր ժամանում է Թուրքիա: Նրա այցը, որ մինչ այդ ուներ «հերթականի» համարում, Լեռնային Ղարաբաղի առնչությամբ ձեռնարկված միջոցառումներից հետո արդեն ձեռք է բերել կարեւոր նշանակություն:

Նազարբաեւը, Ռուսաստանյան Ֆեդերացիայի նախագահ Բորիս Ելցինի հետ միասին, Ղարաբաղի հարցում Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ստանձնում է միջնորդի դեր: Այսպիսով, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները նստում են բանակցությունների սեղանի շուրջ:

Նազարբաեւը Թուրքիա է ժամանում կողմերի միջեւ միջնորդի իր պարտականությունները կատարելուց հետո: Բնական է, որ Թուրքիան Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ տեղի ունեցած բանակցությունների մասին ուղղակի սկզբնաղբյուրից տեղեկություններ ստանալու հնարավորություն է ձեռք բերում:

Նազարբաեւի այցի կարեւորությունը ժամանակի ընտրության մեջ է: Ինչպես Նախիջեւանի իրադարձություններն անմիջականորեն տեղ են զբաղեցնում Թուրքիայի հետաքրքրությունների շրջանակում, նույնպես էլ Թուրքիան մեծ հետաքրքրություն է ցուցաբերում Լեռնային Ղարաբաղի ճակատագրի հանդեպ:

Առհասարակ, Թուրքիան յուրահատուկ ուշադրությամբ հետեւում է Խորհրդային Միության մեջ տեղի ունեցող անցողարձին: Խորհրդային հանրապետություններ են գործուղվել թուրքական երկու պատվիրակություններ: Դրանցից առաջինը, որ գլխավորում է Բիլալ Շիմշիրը, շրջագայում է միության մահմեդական հանրապետություններում:

Պատվիրակության առջեւ խնդիր է դրված պարզաբանել, թե մշակութային եւ քաղաքական պարտներում ինչպիսի՞ ակնկալիներ կարելի է ունենալ տվյալ հանրապետություններից: Թուրքիան դրանով փորձում է կարծիք կազմել հանրապետությունների կողմնորոշման մասին եւ ուզում է պարզաբանել նրանք իրենց հայացքը դեպի Թուրքիա կուղղե՞ն, թե՞ դեպի Իրան: Ըստ ամենայնի, այդ հանրապետությունների պատճառով առաջիկայում Թուրքիայի եւ Իրանի միջեւ կծավալվի լուրջ մրցակցություն: Ահա Թուրքիայի արտգործնախարարությունը միջոցներ է ձեռք առնում, որպեսզի պատրաստ լինի նման մրցակցության:

Իսկ երկրորդ պատվիրակությունը լիազոր դեսպան Իսմեթ Բիրսելի գլխավորությամբ շրջագայություն է կատարում միութենական քրիստոնյա հանրապետություններում: Պատվիրակությունը եղավ նաեւ Հայաստանի մայրաքաղաք Երեւանում:

Պատվիրակությունները շարաթվա վերջում կվերադառնան Թուրքիա: Նրանց զեկուցագրերը անմիջապես կուսումնասիրվեն համապատասխան մարմինների կողմից:

Նման ձեռնարկումներով Թուրքիան շարունակում է զարգացնել իր փոխհարաբերությունները Մոսկվայի հետ, դրսեւորելով այդ գործում մեծ զգուշավորություն: Ի դեպ, բոլոր այցերն անխիտ իրականացվում են Մոսկվայի անմիջական հավանությամբ: Պատվիրակությունների այցի հարցը բարձրացվել էր դեռ Թուրքիայում, Պրիմակովի ընդունելության ժամանակ, եւ նրան տեղեկություններ էր տրվել քաղաքական այն նպատակների մասին, որոնց իրականացմանը հետամուտ է լինելու Թուրքիան:

Անկախության հռչակումով խորհրդային մահմեդական հանրապետություններն, անշուշտ, իրենց վրա են գրավելու միջազգային հանրության ուշադրությունը: Որպիսեւ, ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ողջ աշխարհում ստեղծված կայուն հավասարակշռությունը կախված է լինելու նրանից, թե ի՞նչ ընթացք կստանա այդ հանրապետություններում առկա իշխանական գերուժը:

Վերոհիշյալ հանրապետությունների վրա իրենց ազդեցությունը տարածելու գլխավոր հավակնորդները երկուսն են: Առաջինն Իրանն է, որի առավելությունը կայանում է իսլամական գերուժն օգտագործելու լայն հնարավորության մեջ, եւ նրա դիրքերն այս ասպարեզում անհամեմատ նախընտրելի են: Իսկ մյուս պետությունը, հանրապետությունների հետ էթնիկական կապեր ունենալով հանդերձ, դրանց համար հատկապես որպես տնտեսական զարգացման մղել մեծ կարեւորություն ներկայացնող Թուրքիան է:

Վերոհիշյալ հանրապետությունները Թուրքիան համարում են վերջին տասնամյակի տրնտեսական կարեւորագույն մղելը: Նույն կարծիքին են նաեւ խորհրդային պետական գործիչները: Օրինակ, անցյալ շաբաթ, հանդես գալով կենտրոնական հեռուստատեսությամբ, Միության ամենահեղինակավոր մեկնաբաններից մեկը նշեց, որ վերակառուցման ծրագրերի լավագույն ձեւով իրագործման պայմաններում անգամ Թուրքիայի ներկայիս մակարդակին հասնելու համար Միությունից կընդահանջվի առնվազն 10 տարի: Թուրքիայի ազդեցության աճը շրջանում կախված է լինելու այն բանից, թե նա ինչքան կդիմադրի ամենաինտենսիվ տնտեսական մղելի իր ընտանակությունը Միջին Ասիայի մահմեդական հանրապետությունների համար:

Թուրքիան վերջին տասնամյակում թե Մարմարայի Արեւելքում եւ թե երկրին հարակից տարածաշրջաններում զգալի ազդեցություն է ձեռք բերել: Այն ուշադրությանը, որին արժանացավ նախագահ Թուրգուտ Օզալը Ռումինիա եւ Չեխոսլովակիա կատարած այցի ժամանակ, Թուրքիայի հետզհետե աճող հեղինակության վառ ապացույցն է:

Այդ իսկ պատճառով, հոկտեմբերի 20-ի համընդհանուր ընտրություններից հետո կազմավորվող նոր կառավարությունը պետք է մրցածի Թուրքիայի դիրքերը պահպանելու մասին, որոնք ձեռք են բերվել միջոցեսական անզիջում մրցակցության պայմաններում եւ անի այն, ինչ հնարավոր է դրանք ամրապնդելու համար:

Հոդեսեսները երկրում գուցե առարկեն, բայց Թուրքիան արդեն մեծ եւ ազդեցիկ պետություն է: Քաղաքական բոլոր կուսակցությունների պարտականությունն է իրենց գործունեության մեջ ելնել այդ իրողությունից եւ Թուրքիան նախապատրաստել 2000 թվականին»:

digitised by A.R.A.R.@

Խուճապի չափ է մասնվել

Լեհաստանում խանութների առատությունը չի համապատասխանում տնտեսական վիճակին

Այս ամառ մեկը մյուսի ետևից Լեհաստանի այսպես կոչված «սուրբ փրկիչները» սկսեցին ցած գլորվել: *«Համերաշխություն»* կուսակցության հերոս ղեկավարներ Վալենսան խորհրդարանում ծավալված ընտրությունների վերաբերյալ օրենքի երկար քննարկման ժամանակ կորցրեց իր դիրքը: Լեժեկ Բալցերովիչին, կենտրոնացված տնտեսությունը փրկելու կոչված այդ «հրեշակին» կասկածում են մեքենայությունների մեջ: Իսկ Յան Ջրիստոֆ Բելեկին՝ ամենահավանական վարչապետը, հրաժարական տվեց անցյալ շաբաթ, բողոքելով, որ խորհրդարանը իրեն թույլ չի տալիս ազատ գործել: Խորհրդարանը անընդհատ մերժեց հրաժարականը: Նա էլ այժմ ընդառաջում է հրամանագրերով իշխել: Միակ հույսն այն է, որ հաջորդ հոկտեմբերի 27-ին կայանալիք համընդհանուր ընտրությունները որոշ դարզաբանում կմտցնեն այս ամենի մեջ: Սակայն «խելոք» լեհերը շատ մեծ հույսեր չեն կապում դրա հետ:

Խորհրդարանում տեղի ունեցող տարակարծությունների մի մասը գալիս է 1989 թվականից, երբ «Համերաշխություն» կուսակցությունը համաձայնեց նախկին վարչակարգի հետ ազատ ընտրություններով կազմելու Վերին դաշտը և դահլիճներում կոմունիստների գրաված երկու երրորդ մասը Ստորին դաշտում: Սա բավական առաջավոր, նույնիսկ հեղափոխական քայլ էր այդ ժամանակվա համար, սակայն այժմ նույնիսկ Ալբանիան է ավելի ազատ ընտրություններ անցկացնում:

Այսպիսով, կառավարությունը այս կիսաժողովրդական քայլը բնաղատում է, համարելով այն մի գլխավոր խոչընդոտ տնտեսական բարեփոխումներ իրականացնելու և համընդհանուր ընտրություններ անցկացնելու ճանապարհին: Այդ ընտրությունները Վալենսան ցանկանում էր անցկացնել անցյալ գարնանը: Այդ քայլը նրանք համարում են Լեհաստանի վզին փաթաթված ընտրությունների չափազանց համեմատական մի համակարգ, որը գուցե նախկին կոմունիստներին աղահովի մի քանի հազելյալ աթոռ, սակայն այն հաստատապես չի կարող աղահովել կառավարության կայուն մեծամասնությունը խորհրդարանում:

Նախկին կոմունիստները կառավարության կամ դարոն Վալենսայի միակ թշնամիները չեն: Նախկին համախոհներից Թադեուշ Մազովեցկին և Բրոնիսլավ Ֆերենկը դրնդում են, որ խորհրդարանը դարտավոր է հաստատ լինել բոլորի առաջ և ոչ թե առաջնորդվել լոկ հրամանագրերով: Ճիշտ է, նրանք նույնպես զգում են, որ տնտեսությունը շատ վերականգնման կարիք ունի, սակայն զգում են, որ չի կարելի թույլ տալ, որ Լեհաստանի ժողովրդավարական գործընթացի հենց սկզբից գործադիր և օրենսդիր մարմինների միջև հավասարակշռվածության խախտումներ լինեն:

Կառավարության շտաղողականությունը հասկանալի է: Պաշտոնական տվյալներով, Լեհաստանի տնտեսությունը խիստ մոայլ տեսք ունի այժմ: Արդարությունը նվազել է: Գործազրկությունը կազմում է 8.4 տոկոս, որը ցնցող մի թիվ է երկրի համար: Բյուջեի դեֆիցիտը, որն անցյալ տարի համարյա վերացել էր, այս տարի հասավ ընդհանուր ազգային եկամտի 25 տոկոսի: Անցյալ տարվա մոտ 4 միլիարդ դոլլար եկամուտ բերած հավելյալ առևտուրը այս տարի «մահամերձ» վիճակում է, առաջացնելով մոտ 1 միլիարդ դոլլարի դեֆիցիտ: Սեփականաշնորհման գործընթացը կցկտուր է առաջ գնում:

Լեհաստանի կառավարության վարկատուները նույնիսկ պատրաստ են երկրի 30 միլիարդի հասնող պարտքի կեսը չեղյալ համարել, պայմանով, որ, սակայն, սկսված բարեփոխությունները շարունակվեն: Առայժմ խառնաշփոթության, կաշառակերության և անբարոյականության վերաբերյալ խոսակցությունները խիստ հաճախակի են հնչում: Ցանուշ Սավիկին՝ Լեհաստանի պարտքերի շուրջ բանակցություններ վարող գլխավոր անձնավորությունը, ստիպված է եղել վերջերս հեռանալ, այն բանից հետո, երբ 80 միլիոն դոլլարի պակասորդ է հայտնաբերվել իր իսկ ղեկավարած արտաքին պարտքը վճարելու ֆոնդում: Իսկ նրա տեղակալներից մեկին դատավարություն է սպասում:

Ոչ ոք էլ չէր ակնկալում, որ Լեհաստանի վերականգնումը հեշտ կլինի: Խանութների բոհոբոհն ու փոքրիկ առևտրական ձեռնարկությունների աճխուժությունը Վարշավայի հրապարակներում չեն համապատասխանում երկրի տնտեսական հարաճուն անկմանը: Խորհրդարանը վերջերս ընդունել է օսար ներդրումների մասին մի նոր օրենք, թույլատրելով օսարերկրյա շահույթի ամբողջական ներս բերումը երկիր: Օսարերկրյա ներդրումները, որոնք երկար ժամանակ խիստ դանդաղում էին, այժմ աճխուժության նշաններ են սկսել ցուցաբերել: Այնպես, որ ամենամեծ սխալը կլինի լեհերի համար այժմ խուճապի մատնվելը և աղավինել այնպիսի ուժեղ մի բրոնցի, որի կարիքը բնավ էլ չունեն նրանք:

The economist

Ուրացավ կսմիթներ

Նրանք արդեն նախագահ են

- Հայենյայն դեպս զարմանալի է, որ ոչ մի հայ կին չտվեց իր թեկնածությունը Հանրապետության նախագահի պաշտոնում ընտրվելու համար:

- Դրա կարիքը չկա էլ, նրանք արդեն նախագահ են:

- Կատակ ես անում:

- Չէ, ինչո՞ւ: եթե նախագահը այն մարդն է, որը ժողովրդին սովից փրկելու համար ծրագրեր է առաջարկում և ինքնազոհ կերպով դրանք իրագործում, ապա մեր կանայք երկու տարի է, ինչ այդ գործը հաջողությամբ իրագործում են:

Արդարացի վրդովմունք

Հայաստանի կանանց շրջանում լուրջ դժգոհություն է հասունանում: Նրանք չեն հասկանում, թե ինչու նախագահական ընտրությունների քվեաթերթիկներում թեկնածուի եւ նրա տեղակալի հետ միասին մտցված չէ նաեւ հանրապետության առաջին տիկնոջ հավակնորդի անունը:

Ի վերջո, պե՞տք է իմանալ, թե ով է ղեկավարելու պետության գլխավորին:

Քանի՞սն են

Հանրապետության նախագահի ընտրության կենտրոնական հանձնաժողովը քվեարկվելու համար գրանցել է չորս թեկնածուի եւ մեկ արդեն ընտրվածի:

Անսխալականություն

Հանրապետությունում ստեղծվել է նոր կուսակցություն, որի գաղափարախոսության հիմքը նոսրադամուսիզմն է:

Հովսեփ Պողոսյան

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹՈՐՈՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ. «Բոլոր գաղափարաբանությունները պետք է ծառայեն հայրենիքին»

Թորոս Բարսեղյանը (նույնն է Քիփրիջյանը) ֆուտբոլի հայ 5 միջազգային կարգի մրցավարներից մեկն է: Ծնվել է 1934 թ. փետրվարի 24-ին Հալեպում:

Վաղուց բնակվում է ԱՄՆ-ում: 16 տարի շարունակ ՖԻՖԱ-ի մրցավար էր: Վարել է հավաքականների մակարդակով միջազգային 42 խաղ, ակումբային ավելի քան 100 միջազգային հանդիպում: «Արարատ»ը 4 անգամ այցելել է ԱՄՆ եւ ամեն անգամ Թորոս Բարսեղյանի հրավերով: Նա մեր ֆուտբոլային դրոշակակրի լավագույն բարեկամներից է եւ այժմ «Արարատ» ակումբի պաշտոնական ներկայացուցիչը ԱՄՆ-ում ու նաեւ «Սպենդոր» հայկական մարզական միության նախագահը:

Մրցապարեզ է դուրս գալիս Թորոս ԲԱՐՍԵՂՅԱՆԸ

–Հիմա ի՞նչ առաքելությամբ եք գտնվում Մայր Հայրենիքում,– այս հարցով դիմում եմ Թորոս Բարսեղյանին:

– Գալիք տարի Լոս-Անջելեսում նախատեսվում է կորեա-հայկական մշակութային եւ մարզական փառատոն: Այդ նպատակով նորից մտադիր եմ հրավիրել «Արարատ»ին: Արդեն օգոստոսի 16-ի համար վարձել ենք Պասադենայի «Ռոզբոլ» աճխարհահռչակ մարզադաշտը, որը տեղավորում է 105 հազար հանդիսական: Ի դեպ հենց այստեղ վերջերս «Արարատ»ը մրցեց Սալվադորի բազմակի չեմպիոն *«Մ-զիլլա»* թիմի հետ, որին հաղթեց 3:1 հաշվով: Հանդիպմանը ներկա էր 25 հազար հանդիսական, որի 80 տոկոսը հայեր էին: Ավելի շատ նշենին. երբ նախորդ ուղեւորության ժամանակ «Արարատ»ը վատ չխաղար Մեխիկայի հավաքականի դեմ:

Մենք բանակցությունների մեջ ենք նաեւ կորեացիների հետ: «Արարատ»ը պետք է հանդիպի Հարավային Կորեայի հավաքականի հետ: Իմ նպատակն է, թեկուզ մարզական գետնի վրա կարեր հաստատել կորեացիների հետ, նրանց ծանոթացնել մեր տղաներին, Կորեա հրավիրել «Արարատ»ին: Դա մանավանդ հիմա Հայաստանի համար շատ կարեւոր է, քանի որ կորեացիներն այժմ աճխարհի ամենալավ բիզնեսմեններն են եւ նրանց հետ հետագայում տնտեսական կարեր հաստատելը խիստ անհրաժեշտ է:

Մարգիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ փորձում է շրջանցել մրցակցին

– «Արարատ»ը օգոստոսին ԱՄՆ կատարած ուղեւորությունից հետո մրցաշարային աղյուսակում կտրուկ նահանջ ապրեց: Չէ՞ք գտնում, որ մրցաշրջանի եռուն պահին արտասահման մեկնելը բացասաբար է անդրադառնում թիմի խաղամակարդակի վրա:

– Ամենեին չեմ կիսում այդ կարծիքը: Ես ինչ մեղք ունեմ, որ «Արարատ»ը «Աերոֆլոտի» մեղքով 7 օր ուշացումով է ժամանել ԱՄՆ եւ տունդարձին էլ «նստել» է Մոսկվայի օդակայանում: Այս անգամ նման սխալ չենք անի: Երեւան-Փարիզ-Նյու Յորք-Լոս-Անջելես ճանապարհով կթռնենք: Նյու Յորքում էլ «Արարատ»ի համար հանդիպում է նախատեսվում:

– **Որպես մասնագետ, «Արարատ»ի մասին ի՞նչ կարծիք եք:**

– «Արարատ»ն ինձ համար միշտ էլ լավն է: Իսկ եթե ավելի անկեղծ, ապա չթերագնահատեմ, լավ թիմ է, միջազգային մակարդակ է ցուցադրում: Դա չափազանցություն չի: «Ագիլլայի» հետ «Արարատ»ը փայլուն խաղաց: Շատ մասնագետներ ապշած էին եւ զգում էին, որ մեր հայրենակիցները միջազգային ասպարեզներում կարող են մեծ հաջողությամբ հանդես գալ: Երվանդ Սոմիասյանը, Կարեն Մարկոսյանը, Ալբերտ Սարգսյանը, Մարգիս Հովհաննիսյանը, Վարդան Խաչատրյանը կարող են խաղալ աճխարհի որեւէ առաջնակարգ թիմում: «Արարատ»ի ներկայիս ղեկավարները լավագույններից են, որ կարողանում են հաջողությամբ աճխատել այս ծանր պայմաններում:

Իմ ամենամեծ նպատակն է Զորադյուրի բազայի նորոգումը: Ես պետք է մենկենասներ գտնեմ, որոնք գումարներ հատկացնեն, որպեսզի Զորադյուրում միջազգային մակարդակի մարզաբազա ստեղծվի:

Տղաները պետք է լավ պայմաններ ունենան, որպեսզի կարգին մարզվեն, չէ՞ որ «Արարատ»ը մեր ոչ պաշտոնական հյուպատոսն է, մեր ազգային հատկանիշների արտացոլման հայելին:

– **Ինչո՞վ եք բացատրում, որ միջազգային կարգի մրցավարների կոչմանն արժանացել են միայն արտերկրի հայերը՝ լիբանանցիներ Խաչատուր Բոյաջյանը, Մարգիս Դեմիրճյանը, Ֆրանսահայ Միշել Քիքաբջյանը, ամերիկահայ Հերոս Պաղումյանը եւ դուք:**

– Ճշմարիտն ասած, եթե դատելու լինենք մեր հայրենակցի մրցավարությամբ, որը «Արարատ» - «Մեսալիաս» հանդիպման եզրային մրցավարն էր, ապա տղավորությունը վատ է: Ես խորհրդային շատ մրցավարների մրցավարություններին եմ ականատես եղել: Նրանց ընդհանուր մակարդակը հեռու է միջազգային ստանդարտից: Երեւում է նրանք առաջնորդվում են այլ սկզբունքներով եւ իրենց գործունեությունների մեջ ազատ չեն:

Հայաստանի մրցավարներին ես իմ ծառայությունը կարող եմ առաջարկել: Տարիներ շարունակ ՖԻՖԱ-ի կողմից կազմակերպված մրցավարական դասընթացների դասախոս եմ եղել: Մի խոսքով, առաջադիմել է պետք:

– **Ինչպե՞ս եք պատկերացնում անկախության ճանապարհը բռնած Հայաստանի ապագան:**

– Ես լավատես եմ: Եթե արտասահմանի հայկական բոլոր կուսակցությունները ընդունեն, որ մեկ հայրենիք ունենք եւ հայրենիքի շահը գերադասեն կուսակցական գաղափարաբանություններից, ապա լավ կլինի: Հայաստանի կուսակցությունների գաղափարաբանություններն էլ, ինչքան որ իրատեսներ լինեն, միշտ պետք է ծառայեն հայրենիքին: Ես ընդունում եմ տարակարծությունը, բայց դա օգտակար պետք է լինի ազգային շահերին:

Մի խոսքով, ես մեծ հավատք ունեմ, եթե չունենամ, հայությունս պիտի մոռանամ:

Լավագույն խաղացող ճանաչված Ալ. Մարգսյանը հատուկ մրցանակ է տանում

Ավելին կասեմ. կարծում եմ, Հայաստանի արժեքորեն այնքան կմեծանան, որ 5 տարի հետո մեր ժողովուրդը տարբեր երկրների հյուպատոսարանների մոտ հերթի կկանգնի ներգաղթի համար:

Ինչ վերաբերում է մարզական կյանքին, այստեղ լրիվ մենուսանալը վտանգավոր է: Մեր մարզիկները բոլոր ելույթ ունենան տարբեր մրցումներում, նույն թվում ԽՍՀՄ առաջնություններում, որպեսզի ուժեղ մրցակցության շնորհիվ պահպանեն իրենց բարձր մակարդակը, բայց օլիմպիական խաղերում անհրաժեշտ է հանդես գալ եռագույն դրոշի տակ:

Հարցազրույցը վարեց Սուրեն ԲԱՐՍԵՂՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Պակիստանը ցանկանում է գործ ունենալ Միության եւ հանրապետությունների հետ

Օրերս ԽՍՀՄ-ում Պակիստանի դեսպան Աբրահամ Զեհանգիր Կալին այցելեց Տաբենդ եւ Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովին հանձնեց Իսլամաբադ այցելելու վերաբերեալ Նավազ Շարիֆի անձնական հրավերը: Ավելի վաղ Իսլամաբադը դիմել էր Տաբենդում գլխավոր հյուպատոսություն բացելու եւ Ուզբեկստանի ու Պակիստանի միջեւ ուղիղ օդային կապ ստեղծելու խնդրանքով:

ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության Հարավային Ասիայի երկրների վարչության դասախանատու աշխատակիցը *«Դիվանագիտական համայնապատկեր»*-ին տված հարցազրույցում այդ առիթով ասաց, որ Պակիստանը մշտապես մեծ հետաքրքրություն է ցուցաբերում Միջին Ասիայի հանրապետությունների հետ հարաբերությունները զարգացնելու գործում, ինչը դայմանավորված է աշխարհագրական դիրքով եւ դաշմական, մշակութային ու կրոնական ընդհանրությամբ: Ավելի ցայտուն այդ ձգտումը արտահայտվում է վերջերս, կապված միութենական հանրապետությունների ինքնուրույնության աճի հետ, այդ թվում եւ արտաքին քաղաքական ու տնտեսական ասպարեզներում:

Դրա հետ մեկտեղ, դիվանագետի խոսքերով, Պակիստանի ղեկավարությունը հասկանալ է տալիս, որ մտադիր չէ Կենտրոնը շրջանցելով զարգացնել կապերը Միջին Ասիայի հանրապետությունների, այդ թվում եւ Ուզբեկստանի հետ: Այսօր Պակիստանի ղեկավարությունը հիմք է ընդունում այն, որ ԽՍՀՄ-ի փոխարեն կձեւավորվի ինքնիշխան դետությունների միություն՝ Ֆեդերացիա կամ կոնֆեդերացիա: Եւ նա, ենթադրեց դիվանագետը, հավանաբար *«ցանկանում է գործ ունենալ Միության հետ՝ միաժամանակ զարգացնելով հարաբերությունները նրա բաղկացուցիչ մասերի հետ»*:

Այն հարցին, թե ԽՍՀՄ-ում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունները ինչպես կանդրադառնան աֆղանական խնդրի լուծմանը, դիվանագետն ասաց, թե *«ցանկալի է, որ Պակիստանը այս խնդրի վերաբերյալ բանակցություններ վարի առաջին հերթին կենտրոնի հետ»*: Ընդ որում, Միջին Ասիայի հանրապետությունները կարող էին իրենց սեփական ներդրումն ունենալ աֆղանական խնդրի խաղաղ կարգավորման գործում: Դա, նրա խոսքերով, կը համապատասխաներ Աֆղանստանի հետ հարեւան բոլոր երկրների շահերին:

ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության աշխատակցի կարծիքով, Աֆղանստանում խաղաղության արագ վերականգնումը կնպաստեր շրջանում բարիդրացիական մթնոլորտ ստեղծելուն, նոր հնարավորություններ կստեղծեր Պակիստանի եւ Միջին Ասիայի հանրապետությունների միջեւ առեւտրա-տնտեսական համագործակցության ազատ զարգացման համար: Այդ դեպքում հնարավոր կլիներ վերսկսել Աֆղանստանով կատարվող տրանզիտային փոխադրումները, ինչ հիմա հնարավոր չէ:

Պատասխանելով «ԴՀ»-ի թղթակցի հարցին, դիվանագետը կասկած հայտնեց, թե Պակիստանը, ընդարձակելով կապերը Ուզբեկստանի եւ Միջին Ասիայի մյուս հանրապետությունների հետ, որոշակի քաղաքական նպատակներ է հետապնդում: Դրա հետ մեկտեղ, նա հիշեց, որ Պակիստանի «որոշ ուժեր» իրոք փորձում են անցկացնել միջինասիական շրջանի մուսուլմանների վերազգային ընդհանրության գաղափարները, մտցնելով այդ հասկացության մեջ եւ Խորհրդային Միջին Ասիայի բնակչությանը: ԽՍՀՄ արտգործնախարարության աշխատակիցը համոզվածություն հայտնեց, որ Պակիստանի կառավարությունը ոչ մի ընդհանուր բան չունի այդ գաղափարները կրողների հետ:

■

Գվարդիականները լքում են իրենց դիրքերը

Ինչպես հաղորդում է *«ԻՏ»*-ի Թբիլիսիի թղթակիցը, Վրաստանի ազգային անվտանգության խորհուրդը, նախագահ Զվիադ Գամսախուրդիայի գլխավորությամբ, վերջնագիր էր ներկայացրել ընդդիմությանը: Հոկտեմբերի 3-ին այդ վերջնագրի ժամկետը լրանալուց հետո Թենգիզ Կիտովանիի խորվարտ ազգային գվարդիականները լքեցին կրկեսի շենքը եւ հավաքվեցին հեռուստատեսության շենքի մոտ: Իրենց դիրքերը լքեցին նաեւ Մեծաբ Կոստավարի միության կամավորները՝ դատգամավոր Վաժու Աղամիձայի գլխավորությամբ: Ըստ երեւույթին, շուտով կսկսվի գվարդիայի հեռացումը Թբիլիսիից:

Ելույթ ունենալով հոկտեմբերի 3-ին խորհրդարանի մոտ տեղի ունեցած հանրահավաքում, նախագահ Զվիադ Գամսախուրդիան շնորհավորեց հավաքվածներին *«խորհրդարանների դարաշրջանի»* կապակցությամբ: Նա կրկնեց, որ *«արյուն չի թափվի, եւ միայն խաղաղ մեթոդներով ժողովուրդը կսիրի խորվարտներին զինաթափվել»*:

Զ. Գամսախուրդիան հայտարարեց, որ մոտ ժամանակներս կհրավիրվի Վրաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանը, որտեղ, նրա կարծիքով, դատգամավորների *«առողջ ուժերը»* կդատապարտեն խորվարտներին: Մինչդեռ Մոսկվայում տեղի ունեցած մամլո ասուլիսում Վրաստանի ընդդիմության ղեկավարները հայտարարեցին, որ Վրաստանի լրատվական շրջափակման վերացումն այսօր առաջնային խնդիր է: Նրանց վկայությամբ, հանրապետությունում հիմա գործնականապես չեն գործում օրենքները, Վրաստանի նախագահը խախտել է իր տված երդումը եւ գործողություններով ջնջել օրենսդիր իշխանությունը:

Մամլո ասուլիսի մասնակիցները հայտարարեցին, որ Վրաստանում սկսել են ստորագրություններ հավաքել նախագահ Գամսախուրդիայի առողջության հոգեբանական քննություն անցկացնելու դահանջի տակ:

Մասնակիցներից մեկը՝ Իվլիան Խաինդրավան նշեց, որ ընդդիմությունը կողմնակից է դայմարի միայն սահմանադրական ձեւերին:

■

Գերխնդիրը միջազգային ասպարեզ դուրս գալն է

Հայաստանի նախագահության թեկնածու, Ազգային Ինքնորոշում Միավորման ղեկավար Պարույր Հայրիկյանը գտնում է, որ այժմ հանրապետության գերխնդիրը միջազգային ասպարեզ դուրս գալն է: Դրանից հետո հանրապետությունն ավելի ակտիվորեն կարող է բարձրացնել Լեռնային Ղարաբաղի հարցը:

Երեւանի եւ Բաքվի հարաբերությունների վերաբերյալ նա հայտարարեց, որ *«արյունոտ անդայման կունենանք նորմալ փոխհարաբերություններ, եւ նրանք կափստանեն միայն կորցրած ժամանակի համար»*:

Ըստ Հայրիկյանի, Հայաստանի արտաքին քաղաքականության երկու այլ առաջնային խնդիրներն են Ռուսաստանի եւ Վրաստանի հետ կապերի զարգացումը: Իսկ վերջինը ռազմա-քաղաքական բնույթի միություն կընդունի է:

Հայրիկյանը հույս հայտնեց, որ Վրաստանում ի վերջո կհաղթանակի ժողովրդավարությունը, իսկ Հայաստանը *«կանցնի գամսախուրդիզմի կողմով»*:

Ներքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներից է, ըստ Պ. Հայրիկյանի, Հիմնադիր ժողովի գումարումը եւ ազգային բանակի կազմավորումը, որը դետք է զբաղվի միայն հանրապետության սահմանների դաշտպանությամբ: Նա արտահայտվեց նաեւ հանրապետությունում ազգային վայրաստ մտցնելու եւ սեփականության բոլոր ձեւերի հավասարության օգտին: Հասարակական կարծիքի հարցման վերջին տվյալների համաձայն, ժողովրդականություն վայելող հավակնորդների մեջ Պ. Հայրիկյանը երկրորդն է՝ Լ. Տեր-Պետրոսյանից հետո:

Հայերը հաց կունենան,- ասում է նախարարը

Հայաստանի հացամթերքի նախարար Ռաֆայել Շահբազյանը հերքեց ասեկոսեներն այն մասին, թե իբր հացն էլ է վաճառվելու կտրոններով: Նա հայտարարեց, որ Հայաստանը ապահովված է ալյուրով ամբողջ ձմռան համար, եւ նույնիսկ ավելին:

Նախարարը հաղորդեց, որ հոկտեմբերին կտրվեն ձավարեղենի կտրոնները. ամիսը 1 կգ, որի կեսը կկազմի բրինձը:

Պատրաստ է սննդամթերքի մատակարարման դայմանագրի նախագիծը

Հոկտեմբերի 3-ին տեղի ունեցած ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության օպերատիվ ղեկավարման կոմիտեի նիստում Յուրի Լուժկովը հաղորդեց, որ Պետխորհրդի առաջիկա նիստի համար նախապատրաստվել է սննդամթերքի մատակարարման միջհանրապետական տնտեսական դայմանագրի նախագիծը:

Այսօր նախագիծը ստորագրվել եւ համաձայնեցվել է 10 հանրապետությունների ներկայացուցիչների կողմից: Այն չեն ստորագրել Ուկրաինան եւ 3 Մերձբալթյան հանրապետությունները: Ադրբեջանը մոտ օրերս կստորագրի նախագիծը:

Չմատակարարելու դեպքում նախատեսված է դատիժ-փոխհատուցում վայրատարով՝ համաշխարհային շուկայի գներով:

Յուրի Լուժկովը հաղորդեց, որ այս դայմանագրի նախագիծը կհանձնվի արեւմտյան երկրներին, որոնք դատրաստ են օգնել:

Լուժկովի գնահատմամբ, մինչեւ 1992 թ. կեսը երկրին հարկավոր է մոտ 10,5 միլիարդ ռուբլու վարկ արդյունաբերական ապրանքներ գնելու համար, այդ թվում եւ 40 միլիոն տոննա հացահատիկ:

ԽՍՀՄ դետբանկի նախագահը հաղորդեց, որ ԽՍՀՄ-ի արտաքին դարտքը ներկա դահին կազմում է 61 միլիարդ դոլար: ■

Տարեվերջին Հայաստանի բյուջեի դեֆիցիտը կկազմի 1 միլիարդ ռուբլի

«Սնարֆ» գործակալությունը հաղորդում է, որ տարեվերջին Հայաստանի բյուջեի դեֆիցիտը կկազմի 1 միլիարդից ավելի, կամ ողջ բյուջեի 30 տոկոսը: Ըստ հանրապետական վարկային վարչության հաղորդած տվյալների, ինֆլյացիայի դատճառով այդ տարբերությունն զգալի է դառնում: ■



Ծաղրանկարը Նիկոլայ ՍՄՆՈՒԳՅՈՆԻ

Տաջիկստանի ընդդիմությունը դժգոհ է նստաշրջանի աշխատանքից

Հոկտեմբերի 3-ին իր աշխատանքն ավարտեց Տաջիկստանի հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը, որը ընդդիմության դահանջով չեղյալ հայտարարեց հանրապետությունում արտակարգ դրություն մտցնելու մասին իր իսկ որոշումը, ինչպես նաեւ դադարեցրեց Տաջիկստանի կոմկուսի գործունեությունը՝ հսկողություն սահմանելով նրա ունեցվածքի վրա:

Սակայն ընդդիմության երրորդ դահանջի վերաբերյալ դատգամավորները այդդես էլ ոչ մի որոշում չընդունեցին: Խորհրդարանի նախագահ եւ հանրապետության նախագահի դատասխանատու Ռահման Նաբիեւը հրաժարական չտվեց, իսկ խորհրդարանը լուծարվի չենթարկվեց:

Մինչեւ հաջորդ նստաշրջան հետաձգվեց նաեւ *«Վերածնունդ»* իսլամական կուսակցության գործունեությունը բռայլատրելու մասին հարցի քննարկումը:

Ինչպես հաղորդում է *«ԻՏ»*-ի թղթակիցը Դուշանբեից, խորհրդարանի շենքի մոտ տեղի ունեցող բազմահազարանոց հանրահավաքի մասնակիցները դժգոհ են նստաշրջանի աշխատանքի արդյունքներից: Հանրահավաքը շարունակվում է եւ կշարունակվի, մինչեւ լուծարվի չենթարկվի Գերագույն խորհուրդը:

■

Հրաձգություն Մարտունիում. նոր զոհեր

Հոկտեմբերի 3-ին Մարտունիում շրջկենտրոնով անցնող անհայտ մեքենայից կրակ է բացվել, որին բնակիչները նույնպես դատասխանել են կրակով: Սդանվել է մեկ բնակիչ, երեքը վիրավորվել են: **«Սնարֆ»** գործակալությունը հաղորդում է, որ սդանվել է ադրբեջանական օմոնի գնդադետը եւ վիրավորվել եւս մեկ օմոնական:

Միջադեպի վայր հասած զրահամեքենան անկանոն կրակ է բացել, որի հետեւանքով զոհվել է մեկ բնակիչ: ■

Չին-խորհրդային բանակցություններ

Չինաստանը ԽՍՀՄ-ի հետ բանակցում է փոխանակային մի համաձայնագրի շուրջը. Մոսկվան Պեկինին «Միգ-31» ինքնաթիռներ եւ հրթիռներ դետք է մատակարարի լայն ընդառման ադրանքների դիմաց: Օգոստոսյան խռովությանը նախորդած շաբաթներին բանակցությունները վարում էին Ջի Դաոնոգը (Չինաստան) եւ Ադոլոն Սիստովը (ԽՍՀՄ), որը այն ժամանակ ավիաշինական արդյունաբերության նախարար էր:

«Լը Մոնդ»

Քրիստոնյաների վերադարձը Ջաբալ Դրուզ «դեռեւս հնարավոր չէ»

Դրուզների դարագլուխ Վալիդ Ջումբլաթը հինգշաբթի, սեդտեմբերի 26-ին հայտարարել է, որ լիբանանյան լեռների դրուզական գոտուց տեղահանված հարյուր հիսուն հազար քրիստոնյաների վերադարձը իրենց օջախներ **«դեռեւս հնարավոր չէ»**, եւ թե այս խնդիրը դետք է լուծվի ամբողջ երկրում փախստականների հարցի ընդհանուր կարգավորման շրջանակներում:

Միաժամանակ Ջումբլաթը դրուզական համայնքին կոչ է արել **«դահդանել հանգստություն եւ ողջախոհություն»** այն բանից հետո, երբ մի քրիստոնյա երկուշաբթի օրը դրուզական մի գյուղում սդանել էր ութ հոգու, որից չորսը՝ լիբանանցի զինվորներ: **«Մենք կցանկանայինք սա համարել մասնավոր դեդք, չնայած նման հանգամանքներ ադրած մեկը (մարդասդանի ընտանիքը բնաջնջվել էր դրուզների կողմից 1989-ի «լեռան դատերազմի» ընթացքում) դառնում է մեքենա, որին կարելի է հեռվից կառավարել»**, ասել է նա:

Ըստ Ջումբլաթի, 1983-ին դրուզների եւ քրիստոնյաների միջեւ կոնֆլիկտից հետո, ինչը դատճառ դարձավ քրիստոնյա բնակչության տեղահանման, **«սոցիալական մի նոր իրականություն հաստատվեց. կան գյուղեր, ուր համագոյակցությունն անհնարին է, կան նաեւ այնդիսիք, ուր ոխը ավելի թույլ է»**:

Ֆրանս դրես

Կ. Բարբիեի փաստաբանն ասում է, թե իր ձեռքին է նախկին գեստադոյականի «կտակը»

Չորեքշաբթի, սեդտեմբերի 25-ին վախճանված Կլաուս Բարբիեի փաստաբան ժակ Վերժեսը հաջորդ օրն իսկ հայտարարել է, թե Լիոնի գեստադոյի հակահրեական բաժնի նախկին դարագլուխը թողել է եսմահու մի փաստաթուղթ, ուր բացահայտում է այն հանգամանքները, որոնք հնարավորություն են ընձեռել 1943 թ. ձերբակալելու դիմադրության ղեկավարներին: **«Բարբիեն թողել է մի կտակ, որը նրա բոլոր արածների դատմությունն է: Ամեն ինչ դարզ է ու հստակ, այլեւս ոչ մի գաղտնիք չկա»**, հավաստացնում է ժակ Վերժեսը:

Փաստաբանը գտնում է, որ նման փաստաթուղթը (որի ավանդատուի անունը չի տալիս) **«գաղտնիք չի մնա շատ երկար»** եւ հավանաբար կհրատարակվի, երբ **«օրը եւ դահը գա»**: Իր կողմից, Բոլիվիայի արդարադատության փոխնախարար Ռոժե Պանդոն նշել է, որ ինքը ընթացք չի տա Կլաուս Բարբիեի մարմինը Բոլիվիայում ամփոփելու հավանական խնդրին:

Բարբիեն իրոք էր հայտնել **«հանգիստ գտնել»** Բոլիվիայում, ուր 1982-ից ի վեր բաղված են կինը եւ որդին: Փոխնախարարը նշել է, թե նացիստական նախկին դարագլուխը, որ Բոլիվիայից վռնդվել է 1983-ի փետրվարին, **«անցանկալի օտարական լինելու դատճառով»** բոլիվիադատակ չէ: Նա բոլիվիական քաղաքացիություն է ընդունել 1957-ին, Կլաուս Ալբման կեղծանունով:

Ֆրանս դրես, Ռոյտեր

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
phone: 58-1841, fax: (8-852)56-2941, telex: 243267 SULA SU
Խմբագիր Յ. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Դասիչ 69149
«Պարբերական» հրատ. տպարան
Լուսերը՝ Interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների
Macintosh համակարգչային շարուածը՝ Ռ.Ա.Կ. ծանոյ եւ տեղեկատուության կենտրոնի

digitised by A.R.A.R.@